DOCUMENT RESUME

ED 279 745 UD 025 358

TITLE	A Handbook on California Education for Language Minority Parents--Armenian/English Edition.
INSTITUTION	California State Dept. of Education, Sacramento. Bilingual Education Office.
PUB DATE	86
NOTE	63p.; For other handbooks in this series, see UD 025 357-362 and ED 270 531-533.
AVAILABLE FROM	Publications Sales, California State Department of Education, P.O. Box 271, Sacramento, CA, 95802-0271 ($3.25 plus sales tax for California residents).
PUB TYPE	Guides - Non-Classroom Use (055) -- Multilingual/Bilingual Materials (171)
LANGUAGE	Armenian; English
EDRS PRICE	MF01 Plus Postage. PC Not Available from EDRS.
DESCRIPTORS	Ancillary School Services; Armenian; Bilingual Education Programs; Educational Facilities; Elementary Secondary Education; *Limited English Speaking; Parent Materials; Parent Participation; *Parent School Relationship; *Program Descriptions; Public Schools; *School Organization; Tests
IDENTIFIERS	California Assessment Program; *California State Department of Education

ABSTRACT

This bilingual handbook, presented both in Armenian and English, is designed to assist parents of language minority students who live in California. The book is part of the technical assistance effort of the State Department of Education to clarify the operations of the California schools to language minority parents so they can better support the education of their children. It provides information on the following: (1) the educational system, enrollment procedures and transportation, especially for elementary and secondary students; (2) basic school programs and curriculum; (3) grades, promotions and testing, with an explanation of the types of tests used in California, such as the California Assessment Program tests and the high school proficiency tests; (4) bilingual education and other services to students who are of limited English proficiency; (5) additional educational programs and services, such as vocational education, continuation education, advanced placement, adult education, child development programs, and summer school; (6) parental involvement with schools, teachers and administrators; and (7) the structure of the public school system. (PS)

****
* Reproductions supplied by EDRS are the best that can be made *
* from the original document. *
****

R-2041

A Handbook on California Education for Language Minority Parents— Armenian/English Edition

"PERMISSION TO REPRODUCE THIS MATERIAL IN MICROFICHE ONLY HAS BEEN GRANTED BY

T. Smith
CA State Ed. Dept.

TO THE EDUCATIONAL RESOURCES INFORMATION CENTER (ERIC)."

U.S. DEPARTMENT OF EDUCATION
Office of Educational Research and Improvement
EDUCATIONAL RESOURCES INFORMATION CENTER (ERIC)

☐ This document has been reproduced as received from the person or organization originating it.

☐ Minor changes have been made to improve reproduction quality.

• Points of view or opinions stated in this document do not necessarily represent official OERI position or policy.

ԱՀԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐՔՈՅԿ ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԼԵԶԻԻ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՅՈՂ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

A Handbook on California Education for Language Minority Parents (Armenian Version)



Prepared under the direction of the Bilingual Education Office California State Department of Education

Publishing Information

Այս վաւերագիրը հրատարակւել է Քալիֆորնիայի նահանգային կրթութեան բաժանունքի կողմից, 721 Քափիթոլ Մալ, Սաքրամենթօ, Քալիֆորնիա, 95814 - 4785, եւ ցրւել է Գրադարանի Ցրում Օրէնքի պայմանների կառավարութեան օրէնքին 11096 մասին համաձայն:

Հրատարակութեան իրաւունք

Armineh Hacopian, Community Resource Liaison, Glendale Unified School District, translated and prepared the section of this publication that is in the Armenian language. This document was compiled by the Bilingual Education Office, prepared for photo-offset production by the Bureau of Publications, and published by the California State Department of Education, 721 Capitol Mall, Sacramento, California (mailing address: P.O. Box 944272, Sacramento, CA 94244-2720). It was printed by the Office of State Printing and distributed under the provisions of the Library Distribution Act and *Government Code* Section 11096.

© Copyright 1986
California State Department of Education

Copies of this publication are available for $3.25 each, plus sales tax for California residents, from Publications Sales, California State Department of Education, P.O. Box 271, Sacramento, CA 95802-0271.

A partial list of other publications available from the Department may be found at the back of this publication. A complete list of publications available from the Department can be obtained by writing to Publications Sales at the address listed above.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		էջ
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ	. . . . .	ix
ՆԱԽԱԲԱՆ	. . . . .	x
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ	. . . . .	xi
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ	. . . . .	1
1.0 ՍՐՀԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ		2
1.1 Ե՞րբ պէտք է զաւակս արժանագրւի ղպրոցում:	. . . . .	2
1.2 Արդեօ՞ք զաւակս կարող է՝ մեր շրջակայքի ղպրոցներից մէկը յաճախել:	. . . . .	2
1.3 Ի՞նչպէս է որոշւում զաւակիս դասարանի մակարդակը:	. .	2
1.4 Արդեօ՞ք ամերիկեան ղպրոցները ընդունում են օտար երկրներում լրացուած դասընթացքները որպէս քրեդիտ:	. .	2
1.5 Նէսօրւայ ճաշը ի՞նչպէս է հայթայթւում աշակերտների համար:		2
1.6 Ի՞նչ գումար պէտք է վճարեմ զաւակիս կրթութեան համար:		2
1.7 Ի՞նչ պէտք է անեմ երբ զաւակս բացակայ լինի ղպրոցից:		3
1.8 Արդեօ՞ք զաւակս ղպրոց գնալուց եւ վերադառնալուց հանրակառք (բաս) է նստելու:	. . . . .	3
1.9 Ի՞նչ կը պատահի եթէ զաւակս ուշանայ ղպրոցի բասից:		3
1.10 Եթէ զաւակս յարմար ճանաչւի մասնայատուկ կրթութեան (Special Education) համար եւ չկարողանայ սովորական ղպրոցի բասից օգտւել, ի՞նչ կարելի է անել:	. . . . .	3
1.11 Ի՞նչ եմ կարող անել զաւակիս ապահովութիւնը երաշխաւորելու համար, բասի մէջ երթեւեկութեան ժամանակ:		3
1.12 Արդեօ՞ք կրթաշրջանները կարող են սակ նշանակել բասից օգտւելու համար:	. . . . .	3
2.0 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ, ԴԱՍԱՀԱՆԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
2.1 Ի՞նչ է նշանակում ղպրոցական նւազագոյն կամ կրճատւած օրը:		4
2.2 Ի՞նչ նիւթեր են դասաւանդւում տարրական ղպրոցի դասարաններում (մանկապարտէզ - 6):	. . . . .	4
2.3 Ի՞նչ նիւթեր են դասաւանդւում երկրորդական ղպրոցներում:		4

էջ

2.4 Երկրորդական վարժարանում ի՞նչ պահանջներ պէտք է լրացնեն իմ զաւակները: 4

2.5 Ի՞նչ է նշանակում անկախ (independent) ուսումնասիրութիւնը: 5

2.6 Ուրիշ ի՞նչ տեսակ յայտագրեր կարելի է գործունէութիւն ունենան զաւակիս դպրոցում: 5

3.0 ԹԻՒՆՇԱՒՈՒՄ, ՅԱՌԱՋԱԳՈՒՄ, ՔՆՆՈՒԹԻՒՆ

3.1 Տարրական դպրոցի աշակերտի վիճակացոյցը ի՞նչ է պարունակում: 6

3.2 Երկրորդական վարժարանի աշակերտի վիճակացոյցը ի՞նչ է պարունակում: 6

3.3 Վիճակացոյցի խորհրդանիշերը ի՞նչ միտք ունեն: 6

3.4 Ի՞նչ է նշանակում վարք ու քարքի (citizenship) նիշը: 6

3.5 Ի՞նչ է նշանակում աշխատանքի (work habit) նիշը: 6

3.6 Ի՞նչ պէտք է անեմ երբ զաւակիս վիճակացոյցը ստանամ: 7

3.7 Տարին քանի անգամ է վիճակացոյց տրւում աշակերտներին: 7

3.8 Ի՞նչ պահանջներ պէտք է լրացնի աշակերտը, յաջորդ դասարան փոխադրւելու համար: 7

3.9 Ի՞նչ է աշակերտին նոյն դասարանում վերապահելու գործելակերպը: 7

3.10 Աշակերտի հմտութեան Proficiency օրէնքը ի՞նչ է պահանջում: 7

3.11 Աշակերտի հմտութեան օրէնքը ի՞նչ ազդեցողութիւն կունենայ ձեր զաւակի երկրորդական վարժարանի շրջանաւարտութեան վրայ: 7

3.12 Ի՞նչ է երկրորդական վարժարանի հմտութեան քննութիւնը: 7

3.13 Ո՞վ պէտք է մասնակցի հմտութեան քննութիւններին: 8

3.14 Աշակերտին քանի՞ անգամ առիթ կը տրւի հմտութեան քննութիւններին մասնակցելու: 8

3.15 Արդեօք Սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտը կարող է հմտութեան քննութիւնները անգլերէնից բացի, մի ուրիշ լեզւով անցնել: 8

3.16 Արդեօք սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների համար յատուկ ծառայութիւններ է հայթայթւում, որպէսի նրանք կարողանան հմտութեան քննութիւնները անցնել: 8

էջ

3.17 Եթէ աշակերտը ծախողի հմտութեան քննութեան մէջ, արդեօք ծնողները կը տեղեկացուեն այդ առթիւ: 8

3.18 Եթէ աշակերտը լրացնի բոլոր պահանջուած դասընթացքները, բայց ծախողի հմտութեան քննութեան մէջ, ի՞նչ կարելի է անել: 8

3.19 Եթէ գաւակս չլրացնի պահանջուած դասընթացքները կամ, չյաջողի հմտութեան քննութեան մէջ, արդեօք ուրիշ միջոցներ կան երկրորդական վարժարանի դիպլոման կամ նրան համարժէք մի վկայական ստանալու : 8

3.20 Ի՞նչ է Քալիֆորնիայի Գնահատման ծրագիրը (CAP) : 9

3.21 Ի՞նչ տեղեկութիւն է հայթայթում Քալիֆորնիայի Գնահատման ծրագիրը ամէն մէկ դպրոցի համար: 9

3.22 Ո՞րտեղ էք կարող գտնել Քալիֆորնիայի Գնահատման ծրագրի տեղեկութիւնները: 9

3.23 Ամենավերջին քննութիւնների արդիւնքները ե՞րբ են պատրաստ լինում: 9

3.24 Արդեօք գաւակս կարող է առանց միջնակարգի վկայականը ունենալու, նաևրային քոլեջ մտնել: 10

3.25 Ի՞նչեր են նահանգային համալսարան եւ քոլեջ ընդունուելու պահանջները: 10

3.26 Ի՞նչեր են Քալիֆորնիայի Համալսարանի ընդունելութեան պահանջները: 10

3.27 Ի՞նչ նիւթական օգնութիւն է կարելի ստանալ գաւակիս քոլեջի կրթութեան համար: 10

4.0 ԵՐԿԼԵԶՈՒԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

4.1 Ի՞նչ է Տան մէջ խօսուող լեզուի տեղեկութիւնը (Home Language Survey): 11

4.2 Ի՞նչ է նշանակում աշակերտի ինքնութիւնը ճանաչել (Student Identification): 11

4.3 Ի՞նչ է Երկլեզուեան կրթութիւնը: 11

4.4 Ո՞վքեր են կազմում Երկլեզուեան կրթութեան աշխատակազմը: 11

4.5 Ի՞նչ պարագայում է Երկլեզուեան կրթութիւն հայթայթուում տարրական դպրոցներում: 12

4.6 Քանի՞ տեսակ երկլեզուեան ծրագրեր գոյութիւն ունեն: 12

էջ

5.11 Ո՞վ է յարմար ծանուցում չափահասերի կրթութեան համար: 16

5.12 Ի՞նչ է Պատեհութեան (opportunity) կրթութիւնը: 17

5.13 Ո՞վ է հայթայթում Պատեհութեան կրթութիւնը: 17

5.14 Արդեօք նահանգային կրթութեան ծրագրի մէջ, Մանուկների Բարեաճման ծրագիր նախատեսւել է զաւակիս համար: . . . 17

5.15 Արդեօ՞ք ես յարմար կը ծանուցւե մ նահանգի նպաստած Մանուկների Բարեաճման ծրագրից օգտւելու (զաւակիս համար) : 17

5.16 Քա՞նի տեսակի նահանգի նպաստով Մանուկի Բարեաճման ծրագրեր գոյութիւն ունեն: 17

5.17 Ո՞րտեղ եմ կարող դիմել, զաւակիս արձանագրելու համար: 17

5.18 Զաւակս Ի՞նչ կը սովորի այս տեսակ մի ծրագրից: 18

5.19 Ես եւ զաւակս ի՞նչ տեսակ օգուտներ կը քաղենք այս ծրագրից: 18

5.20 Ի՞նչքան է ծրագրի ծախսերը: 18

5.21 Ի՞նչ են Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցները: . . . 18

5.22 Ի՞նչեր են Ամբողջ Տարին Շարունակւող Օրացոյցերը: 18

5.23 Արդեօք Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցները յաճախող աշակերտները, նոյն դասերի ծրագիրն են ունենում ինչ որ սովորական դպրոցների աշակերտները: 18

5.24 Ի՞նչու բոլոր դպրոցները Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցներ չեն: 19

5.25 Արդեօ՞ք Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցները պարտադրական են: 19

5.26 Արդեօ՞ք Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցի աշակերտները բոլորը միաժամանակ ե ն դպրոց յաճախում: 19

5.27 Արդեօ՞ք Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցները ամառնային դասարաններ ունեն : 19

5.28 Ո՞րտեղ եմ կարող յաւելեալ տեղեկութիւններ գտնել, Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցների մասին: 19

5.29 Արդեօ՞ք զաւակներս հաճոյք կը տանեն Ամբողջ Տարին Շարունակւող կրթութիւնից: 19

5.30 Ի՞նչ է ամառնային դպրոցը: 19

5.31 Ամառնային դպրոցը ի՞նչպէս է կարող օգնել աշակերտներին: 20

5.32 Ի՞նչպէս պէտք է իմանամ որ մանուկս տաղանդաւոր եւ ուշքով պարգեււած է: 20

էջ

4.7 Ի՞նչ է պատահում երբ մի տարրական վարժարանի սահմանած անգլերէնի կարողութիւնով աշակերտների թիւը 10 տոկոսէ պակաս է: 12

4.8 Ի՞նչ պարագայում է երկլեզուեան ծրագիր յայտարարւում երկրորդական վարժարանում: 13

4.9 Սահմանած անգլերէն կարողութիւնով աշակերտը ի՞նչքան պէտք է մնայ երկլեզուեան ծրագրի մէջ: 13

4.10 Արդեօք նախքան մանուկին երկլեզուեան ծրագրի մէջ տրժանագրելը, ծնողները պէտք է տեղեկացուեն: 13

4.11 Ի՞նչ կը պատահի եթէ ծնողները ցանկանան իրենց զաւակին երկլեզուեան ծրագրից հանել: 14

4.12 Ծնողները կարող ե՞ն պահանջել որ իրենց զաւակը Անհատական Ուսման ծրագրից(individual learning program)հանւի: 14

4.13 Ի՞նչ է երկլեզուեան Խորհրդատու Յանձնախումբը: 14

4.14 Ի՞նչեր են երկլեզուեան Խորհրդատու Յանձնախմբի պարտականութիւնները: 14

5.0 ՅԱՒԵԼՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

5.1 Ի՞նչ է Յառաջացած Տեղաւորման (advanced placement) ծրագիրը: 15

5.2 Ի՞նչ է Փոխընտրական (alternative) կրթութիւնը: 15

5.3 Ի՞նչ է Շարունակական (continuation) կրթութիւնը: . . . 15

5.4 Ո՞վ է յարմար ճանաչւում Շարունակական կրթութեան համար: 15

5.5 Ի՞նչ է Արհեստաւորական (vocational) կրթութիւնը: 15

5.6 Ի՞նչ է Արհեստաւորական կրթութեան նպատակը: 15

5.7 Ո՞վ է յարմար ճանաչւում Արհեստաւորական կրթութիւն ստանալու համար: 16

5.8 Ի՞նչ է նշանակում Աշխատանքի Փորձառութեան կրթութիւն (work experience) : 16

5.9 Ի՞նչ է Չափահասների (adult education) կրթութիւնը: 1

5.10 Ո՞վ է վճարում Չափահասերի կրթութեան ծախսը: 1

էջ

5.33 Ի՞նչեր են Քալիֆորնիայի Պարգեւաւածների եւ Տաղանդաւորների կրթութեան (GATE) յայտագրի գաղորշիչ կէտերը: 20

5.34 Ի՞նչեր են Պարգեւաւած եւ Տաղանդաւոր աշակերտների կրթութեան գաղորշիչ դասաւորումները: 20

5.35 Ի՞նչ փաստեր են նկատի առնում քնորոշելու համար որ մի աշակերտ ուշքով պարգեւաւած եւ տաղանդաւոր է: 20

5.36 Դպրոցի ո՞ր դասարաններն են ծառայութիւններ ստանում Պարգեւաւած եւ Տաղանդաւորների կրթութեան ծրագրից: 21

5.37 Արդեօք Բոլոր կրթաշրջանները պարտադիր է ն Պարգեւաւածների եւ Տաղանդաւորների յայտագիր ունենալու: 21

5.38 Ի՞նչեր են աշխատանքի քուլաւաւութիւնները: 21

5.39 Ո՞վ է աշխատանքի քուլաւաւութիւն յանձնելու (work permits) գաղասխանատուն: 21

5.40 Վաւերացած աշխատանքի քուլաւաւութիւնը ի՞նչ տեղեկութիւններ է պարունակում: 21

6.0 ԾՆՈՂԻ ՄԱՍՆԱՑՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԷՋ

6.1 Ի՞նչու պէտք է ժեռնամուխ լինեմ գաւակիս կրթութեան խնդիրների մէջ: 22

6.2 Ի՞նչպէս եմ կարող ան մէջ գաւակիս կրթութեան նեցուկ դառնալ: 22

6.3 Որպէս ծնող, ի՞նչ ձեւերով եմ կարող մասնակցել իմ գաւակիս դպրոցի աշխատանքների մէջ: 22

6.4 Որպէս ծնող, ի՞նչ իրաւունքներ ունեմ ես: 23

7.0 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԱՁՄԱՆԵՐՊՈՒԹԻՒՆԸ

7.1 Ի՞նչպէս է հանրային դպրոցների կազմակերպութիւնը: 25

7.2 Ի՞նչ գլխաւոր գործակալութիւններ ազդեցոդութիւն ունեն հանրային դպրոցների վրայ: 25

7.3 Ո՞վ է դեկավարում ժեր կրթաշրջանի դպրոցները: 25

7.4 Ի՞նչպէս է տարրական դպրոցի կազմակերպութիւնը: 25

7.5 Ի՞նչպէս է երկրորդական դպրոցի կազմակերպութիւնը: . . . 25

7.6 Կրթաշրջանները նիւթապէս ի՞նչպէս են կառավարում: 25

7.7 Ի՞նչու պէտք է ծնողները ըմբռնեն հանրային դպրոցների կազմակերպութիւնը: 26

Քալիֆորնիայի հանրային դպրոցները մատուցանում են կրթական միջոցների մի զանծ աշակերտութեան համար: Այս գրքոյկով, դուք կարող էք ըմբռնել կրթական խնդիրները եւ տեղեկութիւն ձեռք բերել դպրոցների մասին. հետեւաբար տիք կունենաք լիովին օգուտ քաղելու կրթական ապարէզներից:

Գումարած վերոյիշեալ խնդրին, ներկայիս կեանքի բոլոր դասերին պահանջող քալիֆորնիացիներ, ստանձնել են մի ընդարձակ կրթական բարենորոգման գործունէութիւն, որի նպատակն է կենդանացնել մեր հանրային դպրոցները եւ մեր ուսուցիչներին օժանել հարկաւոր դասաւանդական միջոցներով, ապահովելու համար գերազանց կրթութիւն մեր բոլոր դպրոցների մէջ: Մեր նահանգում ծայրէ ի ծայր ներդաշնակ ջանքեր են քափւում զարգացնելու ուսումնական ծրագիրները, գրաւելու լաւագոյն դասախարակներ, գանելու եւ վարժեցնելու անօրէններ, բարելաւելու քննութիւնների որակը եւ դասագիրքերը, նաեւ հրաւիրելու ծնողներին, առեւտրական եւ անհատական առաջնորդներին եւ ամբողջ համայքին մասնակցելու դպրոցների վերանորոգման աշխատանքին:

Դպրոցի եւ տան միջեւ եղած համագործակցութիւնը այս աշխատանքի կարեւոր կէտերից մէկն է համարւում: Մեր գաւակների կրթութեան որակը բարելաւելու համար մեր ջանքերը այն ժամանակ կյաջողեն, եւ միայն այն ատեն, որ մենք կարողանանք միացնել դպրոցի եւ տան ուժերի աղբիւրները եւ հիմնել այդ երկու աղբիւրների վրայ մի առ մի: Ծնողները, ուսուցիչները եւ դպրոցի անօրէնները միասնաբար են կրում աշակերտութեան համար գերազանց կրթութիւն տայքայքելու պատասխանատուութիւնը: Այս գրքոյկի հրատարակութեան վերաբերեալ ձեր, ծնողներիդ, ցուցաբերած հետաքրքրութիւնը փաստում է որ դուք նուիրած էք եւ ցանկութիւն ունէք ձեր գաւակների կրթութեան խնդիրների մէջ մասնակցելու: Այս շատ քաջալերական է մեզ համար, եւ ձեր իմացականութիւնը եւ հետաքրքրութիւնը գովեստի է արժանի:

Ձեր մասնակցութիւնը կրթական խնդիրների մէջ, աշակերտների առաջադիմութեան ամենակարեւոր ազդակներից է համարւում, այն պարզ պատճառով որ աշակերտները իրենց տան մէջ սովորած խնդիրները իսկոյն դպրոց են փոխադրում: Երբ նրանց ծնողները, որ առաջին եւ ամենակարեւոր ուսուցիչներն են, առժէքաւորում են սովորելը եւ իրագործումը, մանուկներն էլ նոյնն են անում: Ուսման վերաբերեալ կատարած հետազոտութիւնները կրկին եւ կրկին ցոյց են տւել ծնողների մասնակցութեան զօրաւոր եւ հաստատուն ազդեցողութիւնը: Այն պարագաներում որ աշակերտները ունենում են լաւ դպրոցական ծրագրեր եւ օգտւում են ծնողների հովանաւորութիւնից, նրանց առաջադիմութեան չափը ամենից բարձր է լինում: Նահանգային կրթութեան Բաժանունքը նուիրած աշխատում է քաջալերելու ծնողներին որ մասնակցեն հանրային կրթական խնդիրների մէջ:

Դպրոցի եւ տան համագործակցութիւնը կենսական դեր է կատարում գերազանց դպրոցական ծրագրեր ստեղծելու եւ աշակերտական աշխատանքները արդիւնաւորելու մէջ: Յոյս ունեմ որ այս գրքոյկը նեցուկ կը դառնայ այդ ազդու համագործակցութեան:

Բիլ Հոնիգ
Ընդհանուր Տեսուչ Հանրային Ուսուցման

ԱՌԱՋԱԲԱՆ

1988-84 դպրոցական տարեշրջանում, Քալիֆորնիա նահանգը 900,000-ից աւելի շատ աշակերտներ ուներ որոնք անգլերէնից բացի ուրիշ մայրենի լեզուներով էին խօսում: Այս թւից մօտաւորապէս 487,000 հոգին ծանաչւել էին որպէս սահմանափակ-անգլերէնի կարողութիւնով (LEP) աշակերտներ: Այս հրատարակութիւնը, մի ճեղենսոի գրքոյկ լեզուի փորձառու սիոթհոններին պետական ծնողների համար, քալիֆորնիայի արթուրեան վերաբերեալ, պատրաստւել է օգնելու սահմանափակ-անգլերէնի կարողութիւնով աշակերտների նորեկ ծնողներին, որպէս նրանք կարողանան լաւագոյն կերպով օգտւել Քալիֆորնիայի հանրային դպրոցների հայթայթած ուսման միջոցներից:

Յատկապէս կարեւոր է սահմանափակ-անգլերէն կարողութիւնով աշակերտների ծնողները, ան մէջ, տեղեակ լինեն Քալիֆորնիայի կրթական մեթոդից եւ ուսումնական տուրքներից: Որպէս առաջին ուսուցիչներ, ծնողները շատ լաւ գիտեն թէ ի՞նչ է իրենց զաւակների կարիքները, բայց յաճախ հեռու են մնում ուսման խնդիրներից որովհետեւ պարզապէս ծանօթ չեն իրենց նոր կրթական միջավայրի հետ: Այս գրքոյկի մէջ արւած տեղեկութիւններից օգտւելով, ծնողների պիտի կարողանան աւելի օգտակար լինել իրենց զաւակներին ուսման ասպարէզի մէջ:

Գրքոյկը ընդգրկում է տեղեկութիւններ աշակերտի արժանագրութեան, հանրային դպրոցների ուսուցման ծրագրերի, շրջանաւարտութեան պահանջների, երկլեզուեան կրթութեան, ծնողների մասնակցութեան, փոխադրութեան, ամբողջ տարին շարունակուող կրթութեան, մանուկների բարեաճման, եւ այլ խնդիրների մասին: Այս տեղեկութիւններից օգտւելով, ծնողները կարող են լրացնել իրենց զաւակների կրթական անմիջական կարիքները: Գրքոյկը նաեւ հայթայթում է տեղեկութիւններ զանազան յայտագրերի, օրինակ փոխընարական կրթութեան եւ չափահասների կրթութեան մասին որոնք օգտակար կլինեն ոչ թէ միայն սահմանափակ-անգլերէնի կարողութիւնով աշակերտներին, այլեւ այն ծնողներին որ փնտրում են նոր կրթական տարբերակներ Քալիֆորնիայում: Նահանգային կրթութեան բաժանունքի մէջ, մենք շատ ուրախ ենք որ յօժարեցինք ենք դառնալ այս գրքոյկի հրատարակութեան գործին: Մենք վստահ ենք որ այս գրքոյկը կրթելով ծնողներին, անուղղակի կերպով կարեւոր կը խաղայ լեզուի փորձառութիւններին պատկանող աշակերտների կրթական ծառայութիւնները բարելաւելու մէջ:

Չէյմզ Ռ. Սմիթ
Փոխ նախագահ
դասընթացքների եւ ուսուցման
առաջնորդութեան մասնաճիւղ

Ռամիրօ Ռէյէս
Ղեկավար
հաստատական օգնական
յայտագրերի բաժանունք

Գիլերմօ Լոփեզ
ղեկավար
երկլեզուեան կրթութեան
գրասենեակի

Քալիֆորնիայի նահանգային Կրթութեան Բաժմունքը փափաքում է երախտագիտութիւն յայտնել քանի անձնաւորութիւնների, որոնք օգտակար են եղել այս գրքոյկի հրատարակման աշխատանքին:

- Լօրի Չին, Ջօզէֆին Լի եւ Թերեզա Չովը առժէքաւոր օժանդակութիւն են տւել ծրագրի սկզբնական աշխատանքի ընթացքում, ի պատասխան Բէյ Էրիայի Չինացի Ծնողների Հիմնարկութեան 1981 թւի գարնանը յանձնած խնդրանքին: Վերոյիշեալները նաեւ օգնութիւն են ստացել նահանգային Կրթութեան Բաժմունքի անդամ Փիթըր Ուանգից:

- Կրթութեան բաժմունքի Լեզւի Փորրամասութիւններին Պատկանող Ծնողների Գրքոյկի յանձնախումբը քաղկացած էր հետեւեալներից,- Ռաբրթ Բէնէթ, Չին Բրադֆորդ, Ռիչարդ Դիազ, Դան Գլայնզ, Մարսէլէթ Հենրի, Էդ Օ Մալի, Դոլորէս Փազ, Փալ Փլոման, Դան Ռէյբըսըն, Թամըր Ռոյբալ, Գլեն Թամըս, Էլէնա Ուանգ եւ Ալեքս Տ՞: Յանձնախմբի անդամները հաստատեցին գրքոյկի կարիքը, կազմեցին մի ազդու գործելակերպ գրքոյկը հրատարակելու համար եւ առաջնորդեցին նախագիծը կազմելու աշխատանքը:

- Յատուկ աշխատակցութիւն բերին կրթութեան բաժմունքի անդամներ Էլենա Ուանգը, որ յայտնեց Չինացի համայքի մտահոգութիւնները կրթական բաժմունքին, եւ Դան Գլայնզը, որ համակարգեց գրքոյկը պատրաստող յանձնախմբի աշխատանքը:

Չանգ Ք. Փարք, նախագահ
Լեզւի Փորրամասութիւնների Ծնողների
Տեղեկատու Գրքոյկի յանձնախումբ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ՄԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐՔՈՅԿ ԼԵԶԻՒ ՓՈՔՐԱՄԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ կոչուած այս հրատարակութիւնը պատրաստուել է Քալիֆորնիա քնակող սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտութեան ծնողներին օգնելու նպատակով: Այս գրքոյկը մաս է կազմում Քալիֆորնիայի նահանգային կրթութեան Բաժմունքի գիտարեստական միջոցառումներին, որոնք առիթ են տալիս ծնողներին աւելի օգտակար լինել իրենց զաւակների կրթութեան աշխատանքին: Ծնողները պէտք է դառնան առաջին ուսուցիչները եւ պէտք է լիովին տեղեակ լինեն իրենց զաւակների կարիքներից:

Գրքոյկը հայթայթում է հիմնական տեղեկութիւն կրթական մեթոտի եւ արժանագրութեան ծեւերի մասին, յատկապէս մանկապարտէզից մինչեւ 12երորդ դասարաններում: Այդ նաեւ բացատրում է տարբեր քննութիւնների ծեւերը որ տրւում են Քալիֆորնիայում, օրինակ՝ Քալիֆորնիայի Գնահատման ծրագրի քննութիւնը եւ երկրորդական վարժարանի հմտութեան քննութիւնը: Գրքոյկը նոյնպէս պարունակում է մէկ մաս երկլեզւեան կրթութեան եւ սահմանուած անգլերէնի կարողութիւնով աշակերտներին տրւած ծառայութիւնների վերաբերեալ: Նկատի առնելով որ սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների ծնողների մեծամասնութիւնը միացեալ նահանգներում դպրոց չեն յաճախել, նրանց տեղեկացնելու նպատակով բացատրութիւններ է տրւել նաեւ տարբեր տեսակի ծրագրերի մասին, օրինակ՝ արհեստների վարժարանների, չափահասների կրթութեան եւ շարունակական կրթութեան վերաբերեալ: Մի ուրիշ մաս ամբողջովին նկարագրում է ծնողների մասնակցութիւնը դպրոցի խնդիրների մէջ, քանի որ շատ երկրներում ծնողները երբեք մօտիկ աշխատակցութիւն չունեն դաստատուների եւ դպրոցի տնօրինութեան հետ:

Այս Գրքոյկը չի տրամադրում ընդարձակ եւ մանրամաս տեղեկութիւններ, որովհետեւ ամէն մէկ ծրագրի գործունէութեան ծեւը կարելի է տարբեր լինի իւրաքանչիւր դպրոցում, կամ կրթաշրջանում: Ծնողները կարող են կապւել ուսուցիչների, դպրոցի խորհրդատուների, տնօրէնների կամ դպրոցի աշխատակազմի միւս անդամների հետ, աւելի մանրամաս տեղեկութիւններ ուզելու պարագային:

1.0 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

1.1 Ե՞րբ պէտք է զաւակս արձանագրւի դպրոցում:

Ձեր զաւակը պէտք է առաջին դասարանում արձանագրւի, երբ նրա վեց տարեկանը լրանայ: Այն մանուկները որ Սեպտեմբեր ամսին 5 տարեկան եւ 9 ամսական լինեն, կարող են դպրոց մտնել: Նոր երկիր մտնող (գաղթական) դպրոցական տարիքի աշակերտները պէտք է միացեալ նահանգներ մտնելուն պէս արձանագրւեն դպրոցում: Բացի ամբողջ տարին շարունակւող դպրոցները որ Յուլիսին են սկսում, աշակերտները սովորական դպրոցներում արձանագրւում են Սեպտեմբեր 1-ին: Սովորական դպրոցական տարեշրջանը Սեպտեմբերից մինչեւ Յունիս է:

1.2 Արդեօ՞ք զաւակս կարող է մեր շրջակայքի դպրոցներից մէկը յաճախել:

Օրէնքի համեմատ, այո: Բայց որոշ կրթաշրջաններ աշակերտի խնդրումից խուսափելու կամ ցեղային հաւասարութիւնը պահելու կամ առանձնայատուկ կրթութիւն հայթայթելու նպատակով, կարելի է մանուկներին փոխադրեն ձեր շրջանից դուրս, ուրիշ դպրոցներ: Եթէ ձեր կրթաշրջանը աշակերտներին հանրակառքով փոխադրում է դպրոցից դպրոց, դուք կարող էք խնդրել որ ձեր զաւակները մնան ձեր շրջանի դպրոցում:

1.3 Ի՞նչպէս է որոշւում զաւակիս դասարանի մակարդակը:

Դասարանի մակարդակը որոշւում է նախ եւ առաջ տարիքի եւ դպրոցական փորձառութեան վրայ հիմնւելով: Այն մանուկները որ լրացրել են իրենց 4 տարին եւ 9 ամիսը Սեպտեմբեր ամսում, կարող են արձանագրւել մանկապարտէզում: վեց տարեկան երեխաները արձանագրւում են առաջին դասարանում, եւ վեց տարեկանից աւելի մեծ մանուկները տնօրէնի որոշումով տեղաւորւում են իրենց յարմար բաժմունքի մէջ, առաջինից մինչեւ տասերկուերորդ դասարաններում:

1.4 Արդեօ՞ք ամերիկեան դպրոցները ընդունում են ուրիշ երկիրներում լրացրած դասընթացքները որպէս քրեդիտ:

Տարրական դպրոցի տարիքում աշակերտների նախկին դպրոցի արձանագրութիւնները (records) օգնում է որ դպրոցը կարողանայ ամենայարմար ծրագիրը հայթայթել աշակերտի համար: Երկրորդական դպրոցի աշակերտների օտար երկրներում լրացրած դասընթացքները (քրեդիտները) առժէքաւորւում են նախքան նրանց տեղաւորումը դասարանում:

1.5 Կէսօրւայ ճաշը ի՞նչպէս է հայթայթւում աշակերտների համար:

Աշակերտները կարող են տնից ճաշ բերել, կամ ճաշ առնել դպրոցում: Դպրոցների մեծամասնութիւնը ճաշարան ունեն, որտեղ կարելի է առնել սննդատու ճաշեր նւազագոյն արժէքով: Նիւթապէս նեղութիւն ունեցող ծնողները կարող են դպրոցի պաշտօնեաներից հետաքրքրւել որ իրենց պայմանները յարմար են ժամանակին կամ ձրի ճաշ ստանալու համար թ՞է ոչ: Քալիֆորնիայի հանրային դպրոցները, օրէնքի համեմատ, պարտաւոր են սննդատու ճաշ մատակարարել կարիքի մէջ գտնւող աշակերտներին ամէն օր: Որոշ դպրոցներ նաեւ նւազագոյն արժէքով կամ ձրիաբար նախաճաշ են մատակարարում ցածր եկամուտով ընտանիքների զաւակներին:

1.6 Ի՞նչ գումար պէտք է վճարեմ մանուկիս կրթութեան համար:

Ամերիկեան հանրային դպրոցների մուտքը ձրի է, եւ գրքերը փոխ են տրւում աշակերտներին առանց որեւէ վճարումի: Համազգեստ հագնելը պահանջւած չէ: Ինչեւէ, որոշ դասարանների համար յատկապէս երկրորդական դպրոցում, կարելի է ձեզնից պահանջւի որ չնչին գումարներ վճարէք աշա-

կերտի անձնական պիտոյքների համար: Ծնողներից սպասւում է որ իրենց զաւակի ճաշի գինը վճարեն:

1.7 Ի՞նչ պէտք է անեմ երբ զաւակս բացակայ լինի դպրոցից:

Դուք պէտք է հեռաձայնէք դպրոց եւ յայտնէք ձեր զաւակի բացակայութեան պատճառը: Երբ ձեր զաւակը բացակայութիւնից յետոյ դպրոց վերադառնայ, նոյն օրը պէտք է նրան ստորագրւած մի երկտող տաք: Երկտողի մէջ պէտք է նշէք բացակայութեան թւականները եւ պատճառը:

1.8 Արդեօք զաւակս դպրոց գնալուց եւ վերադառնալուց հանրակառք (բաս) է նստելու:

Բոլոր կրթաշրջանները բասի փոխադրութեան միջոցներ չունեն: Փոխադրութեան միջոցներ հայթայթող կրթաշրջաններում, միայն այն աշակերտներն են բասից օգտւում որ իրենց տան եւ դպրոցի հեռաւորութիւնը շատ երկար է քայլելու համար: Դուք պէտք է դպրոցից տեղեկանաք փոխադրութեան, բասի կանգառների, եւ երթեւեկութեան ժամերի մասին: Նաեւ կարող էք մասնակցել ծնողների եւ մանուկների ծանօթացման հանդիպումներին որոնք կը հեշտացնեն դպրոցի առաջին օրը ձեր եւ ձեր զաւակների համար:

1.9 Ի՞նչ կը պատահի եթէ զաւակս ուշանայ դպրոցի բասից:

Հարկաւոր է որ դուք նախապէս այնպէս մի դասաւորութիւն ստեղծէք որ այդպիսի մի պարագայում ձեր զաւակը ապահով լինի եւ կարողանայ ուրիշ միջոցով դպրոց հասնել: Պէտք է նախապէս խօսէք ձեր զաւակի հետ այդ առթիւ, ապահով լինելու համար որ բասից ուշանալու պարագայում մանուկը գիտէ թէ ի՞նչ պէտք է անի եւ ո՞րտեղ պէտք է գնայ:

1.10 Եթէ զաւակս յարմար ճանաչւի մասնայատուկ կրթութեան (Special Education) համար եւ չկարողանայ սովորական դպրոցի բասից օգտւել, ի՞նչ կարելի է անել:

Եթէ ձեր զաւակը յարմար ճանաչւի մասնայատուկ կրթութեան համար, նրա անհատական կրթական ծրագրի (ILP) մէջ կը նշւի թէ ի՞նչ տեսակ փոխադրութեան միջոց պէտք է յատկացւի նրան: Դուք կարող էք դիմել դպրոցի աշխատակազմին եւ յաւելեալ տեղեկութիւններ ստանալ:

1.11 Ի՞նչ կարող եմ անել իմ զաւակիս ապահովութիւնը երաշխաւորելու համար բասի մէջ երթեւեկութեան ժամանակ:

Ձեր զաւակը պէտք է բասից օգտւելու օրէնքները իմանայ: Եթէ նա դժւարութիւն ունի մեքենավարի ասածը հասկանալու մէջ, դուք պէտք է նրան հասկացնէք օրէնքները եւ պահանջէք որ հնազանդւի դրանց: Դպրոցների մեքենավարերը ամէն կերպ աշխատում են անվնաս փոխադրել ձեր զաւակներին. բայց նրանք նաեւ կարիք ունեն ձեր օգնութեան եւ ձեր զաւակի համագործակցութեան:

1.12 Արդեօք կրթաշրջանները կարող են սակ նշանակել բասից օգտւելու համար:

Այո, կարելի է սակ նշանակել: Դուք պէտք է ձեր զաւակի դպրոցից հարցնէք որ ձեր կրթաշրջանում բասի սակ ստացւում է թէ ոչ: Մասնայատուկ կրթութեան մէջ արծանագրւած աշակերտների եւ ցածր եկամտաւով ընտանիքի զաւակներից չպիտի բասի սակ ստացւի: Կրթաշրջանն է որոշում թէ ո՞վ է կարող օգտւել ձրի փոխադրութիւնից:

2.0 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ, ԴԱՍԱԽՆԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1 Ի՞նչ է նշանակում դպրոցական կրճատված կամ նվազեցված օրը:

Կրճատված օրը նշանակում է կարճ դպրոցական օր: Այդ օրը աշակերտները կարող են սովորական օրից ավելի շուտ տուն գնալ: Օրվա մնացած ժամերը յատկացվում է աշխատակազմի ժողովներին եւ միւս դպրոցական աշխատանքներին: Ծնողները տեղեկագիր կստանան դպրոցից թէ ո՞ր օրն է կրճատված օր լինելու եւ աշակերտները ո՞ր ժամին պիտի արձակուեն:

2.2 Ի՞նչ նիւթեր են դասաւանդւում տարրական բաժմունքի դասարաններում (մանկապարտէզ – 6):

Տարրական դպրոցում (մանկապարտէզ – 6) հիմնական դասանիւթերն են՝ լեզու որ ընդգրկում է խօսել, կարդալ եւ գրել, նաեւ թւաբանութիւն, հանրային ուսումնասիրութիւն, գիտութիւն, եւ մարմնամարզութիւն: Դասաւանդական ծրագիրը կարելի է նաեւ ընդգրկի երաժշտութիւն եւ գեղարւեստ: Որոշ դպրոցներում կարդալը եւ միւս նիւթերը դասաւանդւում են երկու լեզւով:

2.3 Ի՞նչ նիւթեր են դասաւանդւում երկրորդական դպրոցում:

Դասերի նիւթերը տարբերւում են կրթաշրջաններում: Դուք պէտք է դիմէք ձեր կրթաշրջանին եւ տեղեկանաք դասերի բովանդակութեան մասին: Դասերը կարելի է բաղկանան գրահաշիւ, անգլերէն, մեքենագրութիւն, աշխարհի պատմութիւն, կենսաբանութիւն, մարմնամարզութիւն, օտար լեզու, գեղարւեստ, տնտեսաբանութիւն, արդիւնաբերութիւն, եւ արւեստ նիւթերից: Այս դասերից որոշները պարտադրական են, որոշները ընտրական:

2.4 Երկրորդական դպրոցում ի՞նչ պահանջներ պէտք է լրացնեն իմ զաւակները:

Սկսեալ 1986-87 տարեշրջանից, բոլոր միջնակարգի դիպլոմա ստացող աշակերտները պէտք է 9 երորդից մինչեւ 12 երորդ դասարան հետեւեալ դասերը անց կացնեն,–

1. Ներքեւում նշած դասերը պէտք է լրացւեն առնւազն տրւած հաշւով, եւ ամէն մէկ դասընթացքը 1 տարի տեւողութեամբ:
   - ա. Երեք դասընթացք անգլերէնում
   - բ. Երկու դասընթացք թւաբանութեան մէջ
   - գ. Երկու դասընթացք գիտութեան մէջ, որը կընդգրկի կենսագիտութիւն եւ քնագիտութիւն
   - դ. Երկու դասընթացք հանրային ուսումնասիրութեան մէջ, որ ընդգրկում է Միացեալ Նահանգների պատմութիւնը, աշխարհաբանութիւնը, աշխարհի պատմութիւնը, մշակոյթ, աշխարհագիտութիւն, եւ ամերիկեան կառաւարութիւն, քաղաքային խնդիրներ եւ տնտեսագիտութիւն:
   - ե. Մէկ դասընթացք գեղարւեստի կամ օտար լեզւի մէջ
   - զ. Երկու դասընթացք մարմնամարզութեան մէջ, բացի այն ժամանակ երբ աշակերտը օրէնքի համեմատ ազատւել է մարզական դասերից:
2. Որեւ ուրիշ տեսակ ուսումնասիրական աշխատանք որ մասնաւորապէս նշանակւած լինի Ուսումնական Խորհրդի կողմից:

Շատ կարեւոր է յիշել այս կէտը որ, ձեր զաւակը այնպէս պէտք է ծրագրի որ մինչեւ 1986-87 ղպրոցական տարեշրջանի սկիզբը կարողանայ լրացնել հարկաւոր դասընթացքները: Յաւելեալ տեղեկութիւնների համար դիմեցէք ձեր կրթաշրջանին:

2.5 Ի՞նչ է նշանակում անկախ (independent) ուսումնասիրութիւնը:

Անկախ ուսումնասիրութիւնը առիթ է տալիս աշակերտին (մանկապարտէզից մինչեւ 12 երորդ դասարան) աշխատելու այնպէս ուսման ծրագրի վրայ որ համահաւասար է դասարանային աշխատանքին բայց դրսում է կատարւում: Անկախ ուսումնասիրութիւնը կարելի է տնում կամ ուրիշ ուրեւէ մէկ տեղում կատարել, որտեղ ուսման յարմար միջոցներ կան: Ձեր կրթաշրջանը լիազօր է շրջանի անկախ ուսումնասիրութեան օրէնքները որոշելու:

2.6 Ուրիշ ի՞նչ տեսակ յայտագրեր կարելի է գործունէութիւն ունենան զաւակիս ղպրոցում:

Դաշնակցային եւ նահանգային կառավարութիւնները հիմնել են տարբեր յայտագրեր աշակերտների առանձնայատուկ կարիքները լրացնելու համար: Ձեր զաւակը կարող է յատուկ օգնութեան կարիք ունենալ, օրինակ անգլերէն լեզւի մէջ: Ինչեւէ բոլոր կրթաշրջանները այս տեսակ ծրագրեր չունեն:

3.0 ԹՒԱՆՇԱՆՆԵՐ, ՅԱՌԱՋԱՑՈՒՄ, ՔՆՆՈՒԹԻՒՆ,

3.1 Տարրական վարժարանի աշակերտի վիճակացոյցը ի՞նչ է պարունակում:

Որոշ կրթաշրջաններ A,B,C,D,F եւ I, են գործածում որպէս թուանշաններ եւ միւսները գործածում են E,G,S,N, կամ S,U, եւ N,գիրերը: Թէեւ որոշ տարբերութիւններ կայ այդ մեթոտների մէջ, ընդհանուր միտքը համարեա թէ նոյնն է: Տարրական վիճակացոյցերը սովորաբար ցուցակագրում են հետեւեալ նիւթերը:

- Լեզու (լսել, խօսել, կարդալ, գրել, քեռականութիւն եւ ուղղագրութիւն)
- Թուաբանութիւն
- Հանրային գիտութիւն
- Բնագիտութիւն
- Առողջապահութեան ուսուցում
- Երաժշտութիւն
- Գեղարուեստ

Վիճակացոյցը կարելի է նաեւ պարունակի աշակերտի ներկայութեան արձանագրութիւնները, վարք ու բարքի նիշ եւ մի յատուկ մաս, ուսուցիչի եւ ծնողի մեկնաբանութիւնների համար: Վիճակացոյցի խորհրդանշերը սովորաբար բացատրւում են վիճակացոյցի մէջ:

3.2 Միջնակարգ վարժարանի աշակերտի վիճակացոյցը ի՞նչ է պարունակում:

Այդ, սովորաբար պարունակում է ամէն մէկ դասի անունը, ուսուցիչի անունը, լրացւած դասերի իրագործման նիշերը, վարք ու բարքի նիշ, յատուկ տեղ ուսուցիչի եւ ծնողի մեկնաբանութիւնների համար եւ աշակերտի ներկայութեան արձանագրութիւնները:

3.3 Վիճակացոյցի խորհրդանիշերը ի՞նչ միտք ունեն:

Համարեա թէ բոլոր դպրոցները գործածում են հետեւեալ ձեւերից մէկը:

A= Գերազանց
B= Լաւ
C= Գոհացուցիչ
D= Պէտք է բարելաւել
F= Ձախողում
I= Անկատար

E= Գերազանց
G= Լաւ
S= Գոհացուցիչ
N= Պէտք է բարելաւել
U= Ոչ-գոհացուցիչ

S= Գոհացուցիչ
U= Ոչ-գոհացուցիչ
N= Պէտք է բարելաւել

3.4 Ի՞նչ է նշանակում վարք ու բարքի (citizenship) նիշը:

Այդ, աշակերտի վերաբերմունքի նիշն է, որը արւում է ուսուցիչի կողմից, աշակերտի կարգապահութեան, պարտաճանաչութեան, հնազանդութեան եւ ընկերակցութեան վրայ հիմնւած:

3.5 Ի՞նչ է նշանակում աշխատանքի(work habit) նիշը:

Աշխատանքի նիշը ցոյց է տալիս աշակերտի հնարագիտութիւնը, ճշգրտութիւնը, ճշտապահութիւնը գործի մէջ եւ կոկիկութիւնը:

Յ.6 Ի՞նչ պիտի անեմ երբ զաւակիս վիճակացոյցը ստանամ:

Դուք պէտք է քննէք ուսուցիչի նշանակաց թւանշանները եւ նրա մեկնաբանութիւնները: Յետոյ պէտք է վիճակացոյցը ստորագրէք եւ ձեր զաւակի միջոցով դպրոց վերադարձնէք: Երբեմն, ուսուցիչը կարող է ցանկանալ ձեզ հանդիպել եւ ձեր զաւակի առաջադիմութեան մասին խորհրդակցել: վիճակացոյցի մէջ դուք կարող էք աւելացնել ձեր մեկնաբանութիւնները:

Յ.7 Տարին քանի՞ անգամ է վիճակացոյց տրւում աշակերտներին:

Տարին չորս անգամ:

Յ.8 Ի՞նչ պահանջներ պէտք է լրացնի աշակերտը յաջորդ դասարանը փոխադրւելու համար:

Տարրական վարժարանում, աշակերտի առաջադիմութեան վրայ հիմնւած, ուսուցիչները որոշում են որ նա պէտք է փոխադրւի յաջորդ դասարանը, թէ պէտք է պահւի նոյն դասարանում: Եթէ աշակերտը պէտք է պահւի նոյն դասարանում, ծնողների հետ խորհրդակցութիւն կը կատարւի: Միջնակարգ վարժարանում, աշակերտի լրացւած դասընթացքները (քրեդիտ) եւ չափանշւած քննութիւնների թւանշանները նկատի են առնւում աշակերտին յաջորդ դասարան փոխադրելու համար: Եթէ այս խնդրի վերաբերեալ հարցեր ունէք, հեռաձայնեցէք ձեր տեղական դպրոցը եւ հարցրէք նրանց գործելակերպը աւարտման եւ յաջորդ դասարան փոխադրւելու վերաբերեալ:

Յ.9 Ի՞նչ է աշակերտին նոյն դասարանը վերապահելու գործելակերպը:

Դպրոցը ակնկալութիւն ունի որ բոլոր աշակերտները փոխադրւեն յաջորդ դասարանը: Եթէ աշակերտը սովորելու դժւարութիւններ ունի, ուսուցիչը ամէն կերպ նրան օգնութիւն կտայ: Եթէ աշակերտը բաւականաչափ չառաջանայ յաջորդ դասարանը փոխադրւելու համար, կարելի է որ պէտք լինի նրան նոյն դասարանում վերապահել մի յաւելեալ կիսամեայ: Դպրոցը կը խորհրդակցի աշակերտի ծնողի կամ խնամատարի հետ, ամենալաւ միջոցը ձեռք առնելու համար:

Յ.10 Աշակերտների հմտութեան proficiency օրէնքը ի՞նչ է պահանջում:

Այդ պահանջում է որ աշակերտը տեղական քննութիւններով գոնէ մէկ անգամ, քննւի չորորդից մինչեւ վեցերորդ դասարանը, եւ մէկ անգամ տաս եւ տասնմէկերորդ դասարանում, կարդալ, գրութիւն եւ թւաբանութեան մէջ:

Յ.11 Աշակերտի հմտութեան օրէնքը ի՞նչ ազդեցութիւն կունենայ ձեր զաւակի երկրորդական վարժարանը աւարտելու վրայ:

Երկրորդական վարժարանի դիպլոման ստանալու համար, ձեր զաւակը պէտք է լրացնի տեղական երկրորդական դպրոցի դասընթացքները եւ յաջողութեամբ անցնի կրթաշրջանի հմտութեան քննութիւնը:

Յ.12 Ի՞նչ է երկրորդական վարժարանի հմտութեան քննութիւնը (proficiency test) :

Ամէն մէկ կրթաշրջան պէտք է պատրաստի հմտութեան չափանիշեր, իր երկրորդական դպրոցների շրջանաւարտների համար: Այս չափանիշերը պէտք է առնւազն ընդգրկեն կարդալ, գրել եւ թւաբանութիւն: Ամէն կրթաշրջան պէտք է նաեւ ունենայ մի յատուկ քննութիւն գնահատելու աշակերտների իրագործման չափը:

8.13 Ո՞վ պէտք է մասնակցի հմտութեան քննութիւններին:

Բոլոր երկրորդական վարժարանի աշակերտները պէտք է յաջողութեամբ անցնեն հմտութեան քննութիւնը, ղպրոցը աւարտելու համար:

8.14 Աշակերտին քանի՞ անգամ առիթ կը տրուի հմտութեան քննութիւններին մասնակցելու:

Ամէն մէկ կրթաշրջան ունի իր քննութեան թւականների ցուցակը: Բայց բոլոր կրթաշրջանները պէտք է իրաւունք տան որ ձախողած աշակերտը նորից մասնակցի այս քննութիւններին: Քննութիւններին մասնակցելու անգամները կախում ունի կրթաշրջանի օրէնքներից:

8.15 Արդեօք սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտը կարող է հմտութեան քննութիւնները անգլերէնից բացի մի ուրիշ լեզուով անցնի:

Աշակերտները պէտք է միայն անգլերէն լեզուն գործածեն հմտութեան քննութեան ժամանակ: Դպրոցը կարելի է իրաւունք տայ, վարժութեան քննութեան ժամանակ աշակերտը իր մայրենի լեզուն գործածի, բայց վերջնական քննութիւնը պէտք է տրուի անգլերէնով:

8.16 Արդեօք սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների համար յատուկ ծառայութիւններ են հայթայթւում, որպէսզի նրանք կարողանան հմտութեան քննութիւնները անցնել:

Դպրոցները պէտք է հայթայթեն երկլեզուեան կրթութիւն սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտներին պատրաստելու հմտութեան քննութիւնների համար:

8.17 Եթէ աշակերտը ձախողի հմտութեան քննութեան մէջ, արդեօք ծնողները կը տեղեկացուեն այդ առթիւ:

Եթէ աշակերտը չյաջողի հմտութեան քննութեան մէջ, դպրոցը պարտաղիր է գրաւոր կերպով ծնողներին յայտնի քննութեան արդիւնքը, եւ նրանց ժողովի հրաւիրի որոշելու համար թէ ծնողը եւ կրթաշրջանը ի՞նչպէս են կարող աշակերտին օգնել որ նա յաջողի քննութեան մէջ:

8.18 Եթէ աշակերտը լրացնի բոլոր պահանջուած դասընթացքները, բայց ձախողի հմտութեան քննութեան մէջ, ի՞նչ պէտք է անել:

Եթէ աշակերտը ձախողի հմտութեան քննութեան մէջ, բայց լրացնի բոլոր պահանջուած դասընթացքները, նա կարող է շարունակաբար հմտութեան քննութեան մասնակցի մինչեւ որ յաջողի: Կրթաշրջաններից շատերը օգնական դասարաններ են ունենում ձախողած աշակերտներին օգնելու համար:

8.19 Եթէ գաւակս չլրացնի պահանջուած դասընթացքները, կամ չյաջողի հմտութեան քննութեան մէջ, արդեօք ուրիշ միջոցներ կան երկրորդական վարժարանի դիպլոման կամ նրան հաւասար մի վկայական ստանալու:

Շրջանաւարտութեան պահանջները չլրացնող աշակերտները կարող են շարունակել դասընթացքներ վերցնել մինչեւ լրացնեն պահանջները: Որեւէ աշակերտ որ արդէն 16 տարեկանը լրացրել է կարող է Քալիֆորնիայի միջնակարգ վարժարանի հմտութեան քննութիւններին(Calif. High School Proficiency) մասնակցել որը տրւում է տարին 3 անգամ նահանգի մէջ 100 տարբեր տեղերում: Քննութեան ժամերը եւ տեղերը ցուցադրուած են լինում բոլոր միջնակարգ վարժարաններում եւ հանրային գրադարանում: Նրանք որ յաջողում են այս քննութեան մէջ, ստանում են վկայականներ որ համարժէք են երկրորդական վարժարանի դիպլոմային: 18 տարեկանից վեր անձնաւորութիւնները որ չեն աւարտել երկրորդական վարժարանը

կարող են մի յատուկ քննութիւն տալ եւ դիպլոմային համահաւասար մի վկայական ստանալ: Այս քննութիւնը տրւում է 250 կենդրոնների մէջ Քալիֆորնիայում, ամբողջ տարւայ ընթացքում:

3.20 Ի՞նչ է Քալիֆորնիայի Գնահատման Ծրագիրը (CAP):

Քալիֆորնիայի գնահատման ծրագիրը ամէն տարի գնահատում է բոլոր տարրական եւ երկրորդական դպրոցները քալիֆորնիայում: Քննութեան տեւողութիւնը 30 րոպէ (վայրկեան) է, եւ տրւում է բոլոր երրորդ, վեցերորդ, ութերորդ եւ տասերկուերորդ դասարանի աշակերտներին: Միայն այս քննութիւնն է որ գործածում է նոյն հարցերը բոլոր դպրոցներում եւ հայթայթում է միակերպ տեղեկութիւններ ամբողջ նահանգի համար, Քալիֆորնիայի տարրական եւ երկրորդական դպրոցների իրագործման մակարդակը որոշելու կարդալու լեզւի եւ թւաբանութեան մէջ:

3.21 Ի՞նչ տեղեկութիւններ է հայթայթում Քալիֆորնիայի Գնահատման Ծրագիրը ամէն մէկ դպրոցի համար:

Քալիֆորնիայի Գնահատման Ծրագիրը հայթայթում է հետեւեալ տեղեկութիւնները,-

- Ընդհանուր դպրոցների նիշերի մակարդակը կարդալու լեզւի եւ թւաբանութեան մէջ:
- Մանրամասն տեղեկութիւններ հիմնական հմտութիւնների յայտագրի առաւելութիւնների եւ պակասութիւնների մասին:
- Համեմատելի տեղեկութիւն ստուգելու համար նիշերի ելեւէջը տարբեր տարիների ընթացքում:
- Ձեր դպրոցի համեմատական ուժը միւս դպրոցների եւ բոլոր Քալիֆորնիայի դպրոցների հետ:
- Աշակերտների ցուցաբերած աշխատանքի(attitudes) որակը կարդալ, գրել, եւ թւաբանութիւն դասերի մէջ:
- Տեղեկութիւններ աշակերտական տարբեր խմբերի համեմատական աշխատանքի մասին, օրինակ՝ աղջիկների աշխատանքը տղաների համեմատութեամբ, հին աշակերտների աշխատանքը նոր աշակերտների համեմատութեամբ:
- Պարբերական տեղեկութիւններ աշակերտի աշխատանքի վրայ ազդող տարբեր ազդակների վերաբերեալ, օրինակ՝ հեռուստատես դիտելու, տնային աշխատանք կատարելու եւ ընթերցանութեան ազդեցողութիւնը աշակերտի աշխատասիրութեան վրայ:

3.22 Ո՞րտեղ էք կարող գտնել Քալիֆորնիայի Գնահատման Ծրագրի տեղեկութիւնները:

Ամէն մէկ կրթաշրջանի կենդրոնական գրասենեակը պէտք է ունենայ երրորդ, վեցերորդ, ութերորդ եւ տասերկուերորդ դասարանների տեղեկութիւնները:

3.23 Ամենավերջին քննութիւնների արդիւնքը (CAP) ե՞րբ է պատրաստ լինում:

Նախորդ ղպրոցական տարեշրջանում կատարւած քննութիւնների արդիւնքը պատրաստ կլինի յաջորդ նոյեմբեր ամսին ձեր տեղական դպրոցի կամ կրթաշրջանի գրասենեակում: Քննութիւնների արդիւնքները ներկայացւում են ձեր տեղական Ուսումնական Խորհրդին եւ նահանգային Ուսումնական Խորհրդին ամէն տարի:

8.24 Արդեօք գաւակս կարող է առանց երկրորդական վարժարանի դիպլոմա ունենալու, հանրային քոլեջ մանել:

Այո, որեւէ անձ որ ունի երկրորդական վարժարանի դիպլոմա կամ նրա համահաւասար վկայականը, կամ որեւէ անձ որ արդէն 18 տարեկան է եւ ուզում է կրթւել կարող է ընդունւելու համար դիմել Քալիֆորնիայի հանրային քոլեջներից մէկը: Հետաքրքրւող աշակերտները պէտք է դիմեն իրենց տեղական հանրային քոլեջի ընդունելութեան գրասենեակը:

8.25 Ի՞նչեր են նահանգային համալսարանի եւ քոլեջի ընդունելութեան պահանջները:

Նահանգային համալսարանի եւ քոլեջի աշակերտները ընտրւում են երկրորդական վարժարանների վերին կարգի շրջանաւարտների մէկ-երրորդի միջից: Ընդունւելու համար նրանց միջինը բոլոր դասերի մէջ պէտք է 2.0 կամ աւելի բաձր լինի, բացի մարմնամարզութեան եւ ռազմական գիտութեան մէջ: 8.2-ի եւ 2.0-ի միջեւ միջին ունեցող աշակերտները կընդունւեն եթէ Ակադեմական Ուշիմութեան Քննութեան կամ Ամերիկեան Քոլեջի Քննութեան մէջ բաւարար նիշեր ստանան: Սկսեալ 1984-ի աշունքից , առաջին տարւայ աշակերտները պէտք է լրացնեն քոլեջի պատրաստական անգլերէնի 8 կիսամեայ եւ պատրաստական քաւթանութեան 4 կիսամեայ, ընդունւելու համար:

8.26 Ի՞նչեր են Քալիֆորնիայի համալսարան ընդունւելու պահանջները:

Համալսարանի առաջին տարւայ աշակերտները ընտրւում են Քալիֆորնիայի միջնակարգի շրջանաւարտների վերի կարգի մէկ-ութերորդի միջից: Ընդունւելու համար աշակերտները պիտի լրացնեն իրենց ծիւղին վերաբերող քննութիւնների եւ ուսուցականութեան պահանջները որ նշւած են համալսարանի դիմումնագրի " undergraduate application " մէջ: Դիմումնագիրը կարող էք ձրիաբար ստանալ որեւէ համալսարանից:

8.27 Ի՞նչ նիւթական օգնութիւն է կարելի ստանալ գաւակիս քոլեջի կրթութեան համար:

Զանազան օգնութիւններ են առաջարկւում նիւթական կարիքի մէջ գտնւող աշակերտներին: Օգնութիւնները ընդգրկում են նիւթական յատկացումներ (օգնական դրամ որ պէտք չէ վերադարձւի) , փոխ արւած դրամ, կամ աշխատանքի առիթներ: Նիւթական օգնութիւնների վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու համար, կապւեցէք ձեր հետաքրքրւած հիմնարկութեան նիւթական օգնութիւնների գրասենեակի հետ: Երկրորդական վարժարանի աշակերտները պէտք է նաեւ դիմեն իրենց խորհրդատուին: Նահանգային կամ դաշնակցային օժանդակութիւն խնդրելու համար, կարող էք Student Aid Application for California կոչւած ձեւը ստանալ ուսումնական հիմնարկութիւնից, կամ Աշակերտի Օգնութեան Յանձնաժողովից Քալիֆորնիայում: California Student Aid Commission, 1401 Fifth St., Sacramento, CA 95814:

4.0 ԵՐԿԼԵԶՈՒԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

4.1 Ի՞նչ է Տան Մէջ Խօսուող Լեզուի Տեղեկութիւնը (Home Language Survey):

Երբ աշակերտը արձանագրուում է քալիֆորնիայի հանրային դպրոցներից մէկում, Տան Մէջ Խօսուող Լեզուի Տեղեկութիւնների ֆորմը պէտք է լրացուի, որոշելու համար թէ աշակերտի տան մէջ ինչ լեզուներ են խօսւում: Նահանգային լեզուին վերաբերող մարդահամարը պատրաստելու համար, այս ֆորմի լրացնելը պահանջւած է բոլոր կրթաշրջաններից: Եթէ հետեւեալ հարցերից որեւէ մէկի պատասխանը անգլերէնից բացի մի ուրիշ լեզու լինի, մանուկը կը ճանաչւի որպէս Ոչ-անգլերէն-խօսող աշակերտ:

ա. Ի՞նչ լեզու սովորեց ձեր զաւակը, երբ առաջին անգամ սկսեց խօսել:

բ. Ամենից յաճախ, դուք ի՞նչ լեզու էք գործածում ձեր զաւակի հետ խօսելիս :

գ. Ի՞նչ լեզուով է ձեր զաւակը խօսում տան մէջ:

դ. Ամենից յաճախ, ի՞նչ լեզու են գործածում ձեր տան չափահասները:

4.2 Ի՞նչ է նշանակում աշակերտի ինքնութիւն (student identification) ճանաչել:

Երբ տան մէջ խօսւող լեզուի դիտողութեան արդիւնքը ցոյց է տալիս որ մանուկը տան մէջ անգլերէնից բացի ուրիշ լեզուով է խօսում, նա քննւում է անգլերէն լեզուի ըմբռնումի եւ խօսելու մէջ: Այս քննութիւնը պատրաստւել է նահանգի կողմից աշակերտի անգլերէն լեզուի բանաւոր կարողութիւնը քննելու: Արդիւնքը ստացւում է նախապէս պատրաստւած չափանիշերից օգտւելով: Մանկապարէզ, առաջին եւ երկրորդ դասարանի աշակերտներին կարդալու եւ գրութեան քննութեան ենթարկելը թողւում է ուսուցչի կամքին: Եթէ գնահատման արդիւնքը ցոյց տայ որ աշակերտը սահուն չէ անգլերէնի մէջ, նա դասւում է որպէս սահմանւած-անգլերէնի կարողութիւնով (LEP) աշակերտ եւ պէտք է տեղաւորւի իրեն յարմար երկլեզուեան ծրագրի մէջ: Ինչեւէ եթէ աշակերտը սահուն ճանաչւի, կամ իր կարողութիւնը համեմատելի լինի նոյն դասարանի անգլերէն խօսող աշակերտների մեծամասնութեան հետ, նա դասւում է որպէս սահուն-անգլերէնի կարողութիւնով (FEP) եւ դրւում է մի սովորական, ամբողջ անգլերէն դասարանի մէջ:

4.3 Ի՞նչ է երկլեզուեան կրթութիւնը:

Երկլեզուեան կրթութիւնը կազմւել է սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների համար: Այս ծրագիրը անգլերէն է սովորեցնում աշակերտներին, նրանց մայրենի լեզուի օգնութեամբ: Երկլեզու դասարանում ուսուցիչը դասաւանդում է անգլերէնով եւ պէտք եղած պարագային աշակերտի մայրենի լեզուով: Այս միջոցով, աշակերտները կարող են մտքերը սովորել իրենց մայրենի լեզուով եւ միաժամանակ հմտանալ անգլերէնի մէջ:

4.4 Ո՞վքեր են երկլեզուեան կրթութեան աշխատակազմը:

Երկլեզուեան կրթութեան ուսուցիչները պէտք է երկլեզուեան հմտութեան վկայագիր ունենան: Ինչեւէ եթէ ուսուցիչը չի խօսում աշակերտների մայրենի լեզուն, սոյն լեզուն խօսող մի դասաւանդական օգնական օգնում է աշակերտներին: Օգնականների կարողութիւնը անգլերէն լեզուն խօսելու,

կարդալու , նաեւ աշակերտների մայրենի լեզուի մէջ, գնահատւում է իւրաքանչիւր կրթաշրջանի կողմից: Օգնականը պէտք է նաեւ ծանօթ լինի սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների մշակութային սովորութիւնների հետ:

4.5 Ի՞նչ պարագայում է երկլեզւեան ծրագիր հայթայթւում տարրական դպրոցում:

Երբ որ դպրոցում նոյն լեզուն խօսող 10 հոգի կամ աւելի շատ սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտներ լինեն նոյն դասարանում, կրթաշրջանը պէտք է գործադրի երկլեզւեան կրթութիւն տարրական դասարանի մէջ:

4.6 Քանի՞ տեսակ երկլեզւեան ծրագիրեր գոյութիւն ունեն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՐԿԼԵԶՒԵԱՆ ՆՐԹՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ- Հիմնական երկլեզւեան կրթութիւնը մի կազմակերպւած դասաւանդական ծրագիր է, որին մասնակցող աշակերտները ուսւում են անգլերէն եւ իրենց մայրենի լեզւով: Այս ծրագրի գլխաւոր նպատակն է զօրացնել աշակերտների անգլերէն լեզուն եւ նրանց ակադեմական իրագործումը:

ԵՐԿԼԵԶՒԵԱՆ ԵՐԿՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - երկլեզւեան, երկմշակութային կրթութիւնը, կազմակերպւած դասաւանդական ծրագիր է, որին մասնակցող աշակերտները ուսւում են անգլերէն եւ իրենց մայրենի լեզւով: Այս ծրագրի նպատակն է, բարձրացնել սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների ընդհանուր ակադեմական իրագործումը, եւ բարելաւել նրանց հմտութիւնը անգլերէն լեզւի մէջ, նոյնպէս միաժամանակ զարգացնել աշակերտների կարողութիւնը իրենց մայրենի լեզւում:

ՆՈՐԱՆԵՐՏ ԵՐԿԼԵԶՒԵԱՆ ԾՐԱԳԻՐ- նորակերտ երկլեզւեան ծրագրի նպատակն է, վերում նշւած ծրագրերի մէջ նորութիւններ մտցնել: Այդ ծրագիրը կենդրոնանում է նոր տեսլութեան մօտեցումի, խմբական ուսուցումի եւ ուրիշ նպատակայարմար զարգացումների վրայ, որոնք յաւելեալ ուսման ասպարէզներ են ստեղծում սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների համար:

4.7 Ի՞նչ է պատահում երբ մի տարրական վարժարանի սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների քիւը 10 հոգուց պակաս է լինում:

Աշակերտների համար կազմւում է Անհատական Ուսման Ծրագիր(ILP) , որը օգտւելով աշակերտների մայրենի լեզւից ուժ է տալիս ակադեմական առաջացմանը, եւ անգլերէն լեզուն է սովորեցնում աշակերտներին:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ - Տարրական դպրոցներում, երբ սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտը երկլեզւեան հիմնական ծրագրի կամ երկլեզւեան երկմշակութային ծրագրի կամ փորձառական երկլեզւեան ծրագրի մէջ չի դրւել, հարկաւոր է առնւազն անհատական ուսման ծրագիր հայթայթւի նրա համար: Այս ծրագիրը երկլեզւեան ծրագրի անհատականացւած ձեւն է: Ծրագրի նպատակն է հաւասար կրթական առիթներ տալ տարրական դպրոցի սահմանւած-անգլերէնի կարողութիւնով աշակերտին, զօրացնել նրա անգլերէն լեզուն, եւ առաջացնել նրա ակադեմական իրագործումը: Այս աշխատանքի մէջ օգտագործւում է նաեւ աշակերտի մայրենի լեզուն, բացատրութիւնների համար:

4.8 Ի՞նչ պարագայում է երկլեզուեան ծրագիր նպատակայնում երկրորդական վարժարանում:

Երկրորդական դպրոցում լեզուական դասընթացները պարտադրական պահանջներ չեն ստեղծում աշակերտների համադրական ըւի վրայ հիմնելով: Ամէն պարագայում նախնական լեզուի ծրագիրը դասաւանդող ուսուցիչները պէտք է երկլեզու, եւ մշակոյթին ծանօթ ուսուցիչներ լինեն, կամ այդպէս ուսուցիչ չլինելու պարագային, հարկաւոր է ունենալ լեզուի զարգացման մասնագէտներ, որոնք ունեն երկլեզու օգնականներ: Երկու տեսակ երկլեզուեան ծրագիր գոյութիւն ունի երկրորդական մակարդակում:

ՄԻԶՆԱՆԱՐԳԻ ԼԵԶՈՒԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ - Որի նպատակն է երկրորդական դպրոցի սահմանած- անգլերէնի կարողութիւնով աշակերտի համար նպատակ կազմակերպուած երկլեզուեան ծրագիր որ դասաւանդուում է երկլեզուեան վկայագրուած դասատուների միջոցով եւ կամ լեզուի զարգացման մասնագէտների կողմից որոնք ունեն երկլեզու եւ մշակոյթին ծանօթ օգնականներ: Ծրագիրը կազմուում է զարգացնելու աշակերտի անգլերէն լեզուի հմտութիւնը եւ ակադեմական իրագործումը: Աշակերտի մայրենի լեզուն գործածուում է նրա ոչ-ընտրական, այսինքը աւարտելու համար պահանջուած, դասերի ուսուցման մէջ:

ՄԻԶՆԱՆԱՐԳԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ - Միջնակարգի անհատական ուսման ծրագիրը ներկայացնում է նւազագոյն կրթական պահանջները որ պէտք է նպատակայնէ միջնակարգի սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտի համար, եւ պէտք է տրամադրւի միջնակարգի բոլոր սահմանուած-անգլերէնի կարողութիւնով այն աշակերտներին որոնք չեն դրսել լեզուի զարգացման ծրագրի մէջ: Այս դասաւորուած, անհատական ծրագրի նպատակն է ապահովել նւազար կրթական առիթներ երկրորդականի սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների համար: Ծրագիրը զօրացնում է աշակերտի անգլերէն լեզուն եւ նրա ակադեմական առաջադիմութիւնը բարելաւում է օգտւելով մայրենի լեզուից:

4.9 Սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտը ի՞նչքան պէտք է մնայ երկլեզուեան ծրագրի մէջ:

Բոլոր սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտները պէտք է ամէն տարի քննւեն անգլերէնի հմտութեան մէջ: Քննութեան ժեւը կընարւի կրթաշրջանի կողմից: Կրթաշրջանի չափանիշերին համաձայն, երբ մի սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտ հասնում է սահուն-անգլերէնի կարողութեան մակարդակին, նա դասւում է որպէս սահուն-անգլերէնի կարողութիւնով աշակերտ եւ պատրաստ է ամբողջովին անգլերէն ծրագրի մէջ դրսելու:

4.10 Արդեօք նախքան մանուկին երկլեզուեան ծրագրի մէջ արժանագրելը, ծնողները պէտք է տեղեկացւեն այդ առիթ:

Այո, նախքան աշակերտի տեղաւորումը երկլեզուեան ծրագրի մէջ, ծնողները պէտք է գրաւոր կերպով տեղեկանան հետեւեալ խնդիրներից:

- Առաջարկուած ծրագրի ինչութիւնը
- Ուրիշ տրամադրելի ընտրութիւնները
- Ծնողների իրաւունքը ծրագիրը այցելելու
- Ծնողների իրաւունքը իրենց զաւակին այս ծրագրից հանելու
- Ծնողների իրաւունքը մասնակցելու դպրոցի եւ երկլեզուեան խորհրդատու յանձնախմբին

4.11 Ի՞նչ կը պատահի եթէ ծնողները ցանկանան իրենց զաւակին երկլեզուեան ծրագրից հանել:

Եթէ սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտի ծնողը ցանկանում է աշակերտին հանել երկլեզուեան ծրագրից (տարրական եւ երկրորդական), դպրոցը պէտք է աշակերտի համար անհատական ուսուցման ծրագիր ILP պատրաստի:

4.12 Ծնողները կարող ե՞ն պահանջել որ իրենց զաւակը անհատական ուսման ծրագրից (individual learning program) հանւի:

Այո, ծնողները կարող են պահանջել որ իրենց զաւակը անհատական ուսուցման ծրագրից հանւի (տարրական եւ երկրորդական): Այսպէս պարագաներում կրթաշրջանը պէտք է ունենայ մի գործելակերպ ապահովելու համար որ ծնողները լիովին տեղեկացել են անհատական ուսուցման ծրագրի նպատակներից եւ պատճառներից եւ գործունէութիւնից: Տեղեկութիւնները պէտք է ծնողներին տրւի տնօրէնի կամ դպրոցի տեղեակ անձնաւորութիւնների մէկի կողմից: Ծրագրից հանւելու գրաւոր պահանջը պէտք է սահրագրւի ծնողի եւ տնօրէնի կողմից, եւ պէտք է պահւի դպրոցի արձանագրութիւնների մէջ մի օրինակ անհատական ուսուցման ծրագրի հետ:

4.13 Ի՞նչ է երկլեզուեան խորհրդատու յանձնախումբը:

Իւրաքանչիւր կրթաշրջան որ առնւազն ունի 50 հոգի սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտ, պէտք է հիմնադրի շրջանային երկլեզուեան խորհրդատու յանձնախումբ: Նոյն ընթացքում ամէն մէկ դպրոց որ 20 հոգուց աւելի շատ սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտ ունի պէտք է հիմնադրի դպրոցի խորհրդատու յանձնախումբ: Սահմանուած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների ծնողները կարող են մասնակցել այս յանձնախմբին, պայմանով որ կրթաշրջանի աշխատաւորը չլինեն: Յանձնախմբի անդամների մեծամասնութիւնը պէտք է բաղկանայ ծնողներից:

4.14 Ի՞նչեր են երկլեզուեան խորհրդատու յանձնախմբի պատասխանատուութիւնները:

Յանձնախումբը նկատի առնելով դպրոցների երկլեզուեան կրթութեան գլխաւոր ծրագրերը, խորհուրդներ կտայ կրթաշրջանի ընդհանուր երկլեզուեան ծրագիրը բարելաւելու համար: Յանձնախումբը նոյնպէս օգտակար կլինի ամբողջ դպրոցների երկլեզուեան կրթութեան կարիքները գնահատելու աշխատանքին: Յանձնախումբը նաեւ պատասխանատու է հետեւել խնդիրների համար:

- Խորհուրդ տալ կրթաշրջանի երկլեզուեան ծրագրերի, նպատակակէտերի եւ պատճառների մասին:
- Օժանդակել ուսուցիչների եւ օգնականների պակասը լրացնելու խնդրի մէջ:
- Աջակցել տարեկան լեզուների վրայ հիմնւած մարդահամարի լրացումի մէջ եւ խորհուրդ տալ փոխընտրական միջոցների կամ եւ գործելակերպերի վերաբերեալ:
- Վերաքննել եւ մեկնաբանել սկզբնական արձանագրութեան ժամանակ աշակերտներին (LEP,FEP,EO) տրւած տեղեկագրերը:
- Վերաքննել եւ մեկնաբանել կրթաշրջանի լեզւի դասաւորումների դատանշերը, չափանշերը եւ գործելակերպերը:
- Սահրագրել երկլեզու դասատուների թուլատւութեան (waivers) պահանջները:

5.0 ՅԱՏԵԼԵԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

5.1 *Ի՞նչ է Յառաջադէմ տեղաւորման (advanced placement) ծրագիրը :*

Յառաջադէմ տեղաւորումի ծրագիրը մի համագործակցական կրթական աշխատանք է հիմնուած այն իրականութեան վրայ որ շատ երիտասարդներ կարող են քոլեջի մակարդակի ուսումնասիրութիւններ կատարել միջնակարգ դպրոցում: Հետաքրքրուող եւ կարող ուժերի տէր աշակերտներին առիթ է տրւում քոլեջի դասերից օգտւեն եւ իրենց յաջողութիւնները ցուցաբերեն յառաջադէմ տեղաւորումի քննութիւնների միջոցով:

5.2 *Ի՞նչ է Փոխընտրական (alternative) կրթութիւնը:*

Փոխընտրական կրթութիւնը հնարաւորութիւն է տալիս որ ծնողները, աշակերտները եւ ուսուցիչները իրենց կամեցած ծրագրերը պահանջեն կրթաշրջանից: Դպրոցների վարչութիւնները պարտաւոր չեն այս պահանջները կատարեն, բայց շատ դպրոցներ լրացնում են տարբեր պահանջներ եւ կարիքներ: Օրինակի համար որոշ անգամներ կրթաշրջանները հայթայթում են փոխընտրական դպրոցներ, որոնց մէջ աշակերտները կարող են ուսւել իրենց մայրենի լեզւով, կամ կարող են արձանագրւել այնպիսի մի դասարանում որ ուսուցիչը մանուկի մայրենի լեզւով է խօսում: Ծնողները եւ աշակերտները պէտք է հետաքրքրւեն առաջարկւած ընտրութիւնների մասին: Նրանք նաեւ կարող են խնդրել նոր փոխընտրական ծրագրեր ունենալ:

5.3 *Ի՞նչ է Շարունակական կրթութիւնը (continuation education):*

Շարունակական կրթութիւնը առիթ է տալիս երկրորդական վարժարանի 16 կամ 17 տարեկան աշակերտները օրւայ կէսը դպրոց յաճախեն: Քալիֆորնիայի մէջ, շարունակական դպրոցը եւ դասարանները ամենաազդու արգելքն են համարւում կրթութիւնը թերի ձգելու դէմ: Նպատակն է՝ ունենալ ճկուն եւ անձնականացւած կրթական ծրագիր որպէս աշակերտը կարողանայ լրացնել շրջանաւարտութեան պահանջները մի փոքրիկ դպրոցի շրջանում:

5.4 *Ո՞վ է յարմար ճանաչւում շարունակական քննութեան համար:*

Որոշ աշակերտներ կարելի է միայն կէս օր դպրոց գնալու կարողութիւնը եւ կարիքը ունենան, եթէ արդէն կէս կամ լրիւ օրը աշխատում են, կամ արդէն արձանագրւած են մի աշխատանքի կամ կրթական ծրագրի մէջ, կամ ֆիզիկապէս, ընկերային կամ տնտեսական պատճառներով դժւարութիւններ ունեն:

5.5 *Ի՞նչ է արհեստաւորական կրթութիւնը (vocational education):*

Արհեստաւորական կրթութիւնը բաղկանում է մի յատուկ աշխատանք կամ արհեստ սովորելուց: Այս տեսակ կրթութիւնը հայթայթւում է կրթաշրջանների եւ շրջանային արհեստաւորական կենդրոնների կողմից, Քալիֆորնիայի հանրային դպրոցների աշակերտութեան համար: Կէս օրւայ աշխատանքներ կարելի է տրւի այն աշակերտներին որոնք եկամուտի կարիք ունեն իրենց ուսումը շարունակելու համար:

5.6 *Ի՞նչ է արհեստաւորական կրթութեան նպատակը:*

Արհեստաւորական կրթութեան նպատակն է՝ հայթայթել բարձր որակի արհեստի կրթութիւն որ յարմար է աշակերտի կարողութիւններին եւ կարիքներին:

5.7 Ո՞վ է յարմար ճանաչւում արհեստաւորական կրթութիւն ստանալու համար:

Յարմար անձնաւորութիւնները բաղկանում են միջնակարգ դպրոցի աշակերտներից, միջնակարգը աւարտողներից կամ կրթութիւնը կիսատ թողած, կամ նոր գործի ասպարէզ մտնող անձնաւորութիւններից: Նաեւ այն անձերից որ աւելի լաւ հմտութիւններ են փնտրում իրենց գործի կամ ուրիշ արհեստների մէջ. նրանք որ յատուկ ֆիզիկական սահմանումներ ունեն եւ նրանք որ բարձրագոյն կրթութիւնով են զբաղուած:

5.8 Ի՞նչ է նշանակում Աշխատանքի Փորձառութեան (work experience) կրթութիւնը:

Աշխատանքի փորձառութեան կրթութիւնը մի դասաւանդական ծրագիր է որ կազմւում է երկրորդական վարժարանների կրթաշրջանների, կամ ուրիշ տեղական կրթական հիմնարկութիւնների կողմից: Այս յատուկ ծրագրի գործունէութեան ուղղեցոյցը եւ չափանիշերը որոշւում է նահանգի կողմից: Քալիֆորնիայում երեք տեսակ աշխատանքի փորձառութեան ծրագրեր կան:

ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ – Այս ծրագիրը կազմւած է միախառն, իրարու հետ կապ ունեցող ուսուցումից եւ դասաւորւած գործի փորձառութիւնից, որոնց միջոցով աշակերտին ասպարէզային եւ առաջադիմութեան միջոց է տրւում: Աշակերտին նաեւ տրւում է տրւում դիտել զանազան աշխատանքների ձեւերը: Արտաղրական հմտութիւններ սովորեցնելու նպատակ չկայ այս ծրագրի մէջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ – Ծրագիրը կազմւած է միախառն գործի փորձառութեան ուսուցումից եւ վճարումով աշխատանքից, որի նպատակն է աշխատանքին յարմար վարք ու բարք եւ վերաբերմունք սովորեցնել աշակերտին: Վճարումով աշխատանքը պէտք է կապ ունենայ աշակերտի ասպարէզային նպատակակէտին:

ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ – Միախառն եւ համընթաց արհեստի ուսուցում եւ վճարումով աշխատանք է տրւում աշակերտին, որը ուղղակիօրէն կապ ունի նրա ասպարէզային նպատակակէտին:

5.9 Ի՞նչ է Չափահասերի կրթութիւնը (adult education):

Չափահասերի կրթութիւնը հայթայթում է հիմնական կրթութիւն անգլերէնը որպէս երկրորդ լեզւի եւ ուրիշ նիւթերի վերաբերեալ որ չափահասերի համար հետաքրքրական են: Չափահասերի կրթութիւնը հովանաւորւում է տանրային հիմնարկութիւնների կողմից: Այսպէս մի ծրագիր գտնելու համար, կապւէք ձեր տեղական կրթաշրջանի կենդրոնի հետ:

5.10 Ո՞վ է վճարում Չափահասերի կրթութեան ծախսը:

Քալիֆորնիա նահանգը, նահանգային կրթութեան բաժմունքի միջոցով տարեկան յատկացումներ է յանձնում յարմար ճանաչւած կազմակերպութիւններին, որոնք մինչեւ ութերորդ դասարանի մակարդակը հիմնական կրթութիւն եւ անգլերէնը որպէս երկրորդ լեզւի դասարաններ են կազմում չափահասերի համար:

5.11 Ո՞վ է կարող արձանագրւել չափահասերի կրթութեան ծրագրի մէջ:

Քիչ կրթութիւն ունեցող եւ ոչ–անգլերէն–խօսող 16 տարեկանից վեր աշակերտները, որոնք միջնակարգի աշակերտ չեն, յարմար թեկնածուներ են համարւում չափահասերի կրթութեան ծրագրին մասնակցելու: Ինչեւէ,

Սոյն ծրագրի անւան տակ տարբեր տեսակի զարգացման եւ բարեաճման դասարաններ էլ առաջարկւում են սահուն-անգլերէն-խօսող եւ կրթւած անձերի համար:

5.12 Ի՞նչ է Պատեհութեան (opportunity) կրթութիւնը:

Պատեհութեան կրթութեան դասարանները եւ անհատական պատեհութեան յայտագրերը պատկանում են այն զանազան ծրագրերի շարքին որ հիմնւել են աշակերտների ուսուցումը յաջողացնելու նպատակով: Ընտրւած աշակերտները դրւում են յարմարացւած դասարանների մէջ, կէս կամ ամբողջ օրւայ համար, սովորական դասարանի փոխարէն կամ համընթաց ղպրոցական նւազաչափ օրւայ հետ:

5.13 Ո՞վ է հայթայթում Պատեհութեան կրթութիւնը:

Ծրագիրը եւ ծառայութիւնները հայթայթում են ղպրոցի մասնագէտ աշխատակազմի անդամները: Այս ծրագրերը օգնում են որ աշակերտները շարունակեն իրենց կրթութիւնը, թեթեւացնում են յարմարացումի դժւարութիւնները եւ օգնում են որ աշակերտները ամենամօտ առիթում վերադառնան իրենց սովորական ղպրոցը կամ դասարանները:

5.14 Արդեօք նահանգային կրթութեան ծրագրի մէջ Մանուկների Բարեաճման ծրագիր նախատեսւել է զաւակիս համար:

Այո, ձեր զաւակը կարող է արժանագրւել նահանգի նպաստով կազմւած մանուկի բարեաճման ծրագրի մէջ, որը ծառայութիւններ է հայթայթում տեղական հանրային եւ անձնական կրթական կազմակերպութիւնների միջոցով: Այս ծառայութիւնների տեւողութիւնը օրւայ մէջ 24 ժամից պակաս է :

5.15 Արդեօք ես յարմար կը ճանաչւեմ զաւակիս համար նահանգային նպաստով մանուկի բարեաճման ծրագրից օգտւելու:

Այո, պայմանով որ ներկայիս վարձւած լինէք, կամ աշխատանքի համար պատրաստութեան դասերի մասնակցէք, կամ գործ փնտրելիս լինէք, կամ անկարող լինէք ՇԻ դատանիշերի ցուցակի վրայ հիմնւած, կարիքի մէջ համարւէք:

5.16 Ի՞նչ տեսակ նահանգային նպաստով կազմւած մանուկի բարեաճման ծրագրեր կան:

Հինը տեսակի ծրագրեր գոյութիւն ունեն:

1. Ընդհանուր
2. Գաղթականների
3. Ղպրոցի մէջ
4. Ղպրոցի տարիքի մանուկի եւ ծնողի բարեաճման ծրագիր
5. Փոխընտրական վճարումով
6. Նահանգային նախա-կրթութեան ղպրոց
7. Միջ-սերունդային
8. Խիստ անկարող մանուկների յատուկ ծրագիր
9. Սկզբունքի եւ վերագրութեան ծրագիր

5.17 Ո՞րտեղ եմ կարող դիմել, զաւակիս արժանագրելու համար:

Դուք կարող էք դիմել որեւէ հանրային կամ անձնական հիմնարկութեան, որ այս տեսակ ծառայութիւններ է մատուցում: Այս հիմնարկութիւնները բաղկանում են կրթաշրջաններից, հանրային քոլեջներից,

Քալիֆորնիայի նահանգային համալսարանից եւ քոլեջից եւ Քալիֆորնիայի համալսարանից, կոմսութեան(county) դպրոցների ընդհանուր նախազահութիւնից, կոմսութեան բարեկեցութեան բաժմունքից, անձնական քոլեջներից եւ համալսարաններից, անձնական մանկամսուրներից, մանկան խնամատար անհատներից, եւ ոչ-շահաբեր կազմակերպութիւններից:

5.18 Իմ զաւակս ի՞նչ կը սովորի այս տեսակ մի ծրագրից:

Այս ծրագիրը պատրաստում է ձեր զաւակին մանկապարտէզ կամ առաջին բաժմունք մտնելու համար եւ օգնում է ձեր դպրոցական զաւակի ինային աշխատանքը եւ դասերը զօրացնելու մէջ, նաեւ զարծանքի աշխատանքներ է ստեղծում մանուկների համար:

5.19 Ես եւ զաւակս ի՞նչ օգուտներ կը քաղենք այս ծրագրից:

Ձեր օգուտները ընդգրկում են ներքեւի կէտերը, բայց չեն սահմանւում հետեւեալների մէջ:

1. Ապահով եւ յարմարացած ֆիզիկական շրջան
2. Տարիքին յարմար աշխատանքներ եւ զբաղումներ
3. Մշակութային, լեզուային, եւ ուրիշ յատուկ կարիքների լրացուցիչ ծրագիրներ
4. Ընտանեական եւ ժողովրդական մասնակցութիւն
5. Ծնողի ուսուցում
6. Տեղական ծրագրերի ազդու եւ արդիւնաւէտ գործունէութիւն
7. Այլազան լեզուային եւ մշակութային աշխատակազմ, յարմարելու համար մանուկների եւ ընտանիքների կարիքների հետ:
8. Նեցուկ ծառայութիւններ, ինչպէս՝ բնակարան հայթայթել
9. Հանրային ծառայութիւններ, ինչպէս բարեկեցութեան իրաւունքներ եւ ծառայութիւնները
10. Առողջապահական ծառայութիւններ ինչպէս ժանագին կամ ծրի առողջապահական խնամքներ

5.20 Ի՞նչքան են ծրագրի ծախսերը:

Վճարումի չափը որոշւում է հիմնւած վճարումների ցուցակի վրայ, նկատի է առնւում ընտանիքի եկամուտը եւ պայմանները:

5.21 Ի՞նչ են Ամբողջ Տարին Շարունակւող Դպրոցները (Year-Round Schools):

Ամբողջ տարին շարունակւող դպրոցները սովորաբար սկսում են Յուլիս ամսում եւ վերջանում են յաջորդ տարւայ Յունիսին: Աշակերտները դպրոց են յաճախում սովորական դպրոցների պէս 175-ից մինչեւ 180 օր տարւայ մէջ: Փոխարէն սովորականի պէս 9 ամիս դասընթացքներ եւ 3 ամիս արձակուրդ ունենան, այս դպրոցները ունենում են երեք կամ չորս կարճ արձակուրդ, որոնց տեւողութիւնն է երեքից մինչեւ վեց շաբաթ:

5.22 Ի՞նչեր են Ամբողջ Տարին Շարունակւող Օրացոյցերը:

Այս օրացոյցերը պատրաստւում են յատկապէս ամբողջ տարին շարունակւող դպրոցների համար: Օրինակ՝ 45-15 ծրագրի մէջ աշակերտները դպրոց են յաճախում ինը շաբաթ, յետոյ երեք շաբաթ արձակուրդ են ունենում: Այս ձեւը կրկնւում է տարւայ մէջ չորս անգամ: Ուրիշ դպրոցական շարունակական օրացոյցերի օրինակներն են՝ 60-20 եւ 90-30 ծրագրերը:

5.23 Արդեօք Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցները յաճախող աշակերտները նոյն դասացուցակն են ունենում ինչ որ սովորական դպրոցների աշակերտները:

Այո, ամբողջ տարին շարունակւող դպրոցները հայթայթում են նոյն ուսման յարմարութիւնները, դասաւանդական պահանջները, գործի փորձառութիւնը, աշակերտական աշխատանքները եւ մարզանքները, ինչ որ սովորական դպրոցը:

5.24 Ի՞նչու բոլոր դպրոցները Ամբողջ տարին Շարունակւող Դպրոցներ չեն:

Ապագայում կարելի է որ բոլոր դպրոցները շարունակւեն ամբողջ տարին: Ինչեւէ, Քալիֆորնիայի դպրոցների սովորական ծրագիրը աւանդական կերպով սկսում է Սեպտեմբերին եւ վերջանում է Յունիսին: Դժւար է աւանդական սովորութիւնները փոխել:

5.25 Արդեօք Ամբողջ Տարին Շարունակւող դպրոցները պարտադրական են:

Որոշ դպրոցներում որ աշակերտների խմողումը արդէն բարդ խնդիր է դարձել, ամբողջ տարին շարունակւող դպրոցի ծրագիրը պարտադրական է: Աւելի քիչ խմողումով դպրոցներում, ծնողները կարող են ընտրել 9 ամսւայ դպրոցի եւ ամբողջ տարին շարունակւող ծրագրերից մէկը:

5.26 Արդեօք Ամբողջ Տարին Շարունակւող Դպրոցի աշակերտները բոլորը համընթաց են դպրոց յաճախում:

Քիչ խմողումով դպրոցներում բոլոր աշակերտները միաժամանակ են դպրոց յաճախում եւ միաժամանակ արձակուրդներից օգտւում: Շատ խմողւած դպրոցներում, աշակերտները բաժանւում են չորս խմբերի: Երբ երեք խումբը դպրոց են յաճախում մէկ խումբը միշտ արձակուրդի մէջ է: Խմբերի արձակուրդները փոփոխակի է լինում որպէս բոլորը նոյն չափով դպրոցից օգտւեն:

5.27 Արդեօք Ամբողջ Տարին Շարունակւող Դպրոցները ամառնային դասարաններ ունե՞ն:

Այո, ամառնային դասարանները, ամբողջ տարին շարունակւող դպրոցներում կոչւում են միջընթացք դասեր եւ տրւում են կարճ արձակուրդների ընթացքում: Աշակերտները կարող են օգտւել նոյն դասերից որ ամառնային դպրոցներն են հայթայթում, միայն թէ ծրագրի դասաւորումը տարբեր է լինում:

5.28 Ո՞րտեղ եմ կարող յաւելեալ տեղեկութիւններ գտնել Ամբողջ Տարին Շարունակւող Դպրոցների մասին

Նախ, կապւեցէք կրթաշրջանի ամբողջ տարին շարունակւող կրթութեան համակարգիչի հետ: Նոյն դպրոցի տնօրէնը, ուսուցիչները եւ խորհրդատուներն էլ կարող են ձեզ լաւ տեղեկութիւններ տալ:

5.29 Արդեօք իմ զաւակներս հաճոյք կտանեն Ամբողջ Տարին Շարունակւող կրթութիւնից:

Այո, ամբողջ տարին շարունակւող դպրոցներում արձանագրւած աշակերտների եւ նրանց ծնողների մեծամասնութիւնը հաճոյքով են մասնակցում այս ծրագրին: Եթէ ձեր զաւակները ամբողջ տարին շարունակւող դպրոցում են արձանագրւած, դուք կարող էք ակնկալել դրական արդիւնք:

5.30 Ի՞նչ է ամառնային դպրոցը:

Ամառնային դպրոցը կազմւում է Յունիս, Յուլիս եւ Օգոստոս ամիսների ընթացքում: Նահանգային նպաստով կազմւած ամառնային դպրոցները հայթայթում են, (1) եօթերորդից մինչեւ տասերկուերորդ դասարանի աշակերտների համար, որ օգնութիւն պէտք ունեն կրթաշրջանի հմտութեան պահանջ-

ները լրացնելու.(2)տասերկուերորդ դասարանի աշակերտների համար որ շրջանաւարտութեան դասընթացքներ (քրեդիտ)պէտք ունեն. (3) տասերորդ դասարանի այն աշակերտների համար որ պէտք է դասերից մէկը նորից վերցնեն, եւ այդ դասը չեն կարող յաջորդ տարում վերցնել , եւ(4) ամբողջ տարին շարունակուղ դպրոցի աշակերտների եւ մասնայատուկ կրթութեան աշակերտների համար: Նահանգային յատկացումով նաեւ յաւելեալ ամառնային դասընթացքներ են կազմւում այն աշակերտների համար որ թւաբանութեան գիտութեան, հանրային ուսումնասիրութեան, լեզւի, օտար լեզւի, գեղարւեստ եւ քամփւթըրի (հաշւիչ մեքենայ) կրթութեան ակադեմական կորզային նիւթերի մէջ են ուսւում:

5.31 Ամառնային դպրոցը ի՞նչպէս է կարող օգնել աշակերտներին:

Ամառնայ.ին դպրոցը աշակերտներին միջոց է տալիս որ առաջադիմեն ակադեմական ասպարէզում, նաեւ զարգացման եւ բարեաճման առիթ է ստեղծում տարրական դպրոցում եւ միջնակարգի առաջին տարիներում: Աշակերտները նոյնպէս կարող են ամառնային դասեր վերցնելով, լրացնել իրենց շրջանաւարտութեան պահանջները:

5.32 Ի՞նչպէս պէտք է իմանամ որ զաւակս տաղանդաւոր եւ ուշքով պարգեււած է:

Քալիֆորնիայի տաղանդաւոր եւ ուշքով պարգեւած աշակերտի օրինական ճանաչման բացատրութիւնն է՝ մի աշակերտ որ հանրային դպրոց է յաճախում, տարրական կամ երկրորդական շրջանում, եւ յայտնւել է որ ցուցաբերւած կամ ներքին կարողութիւններ ունի որ կարելի է բարձրագոյն իրագործումների ապացոյցը լինել:

5.33 Ի՞նչեր են Քալիֆորնիայի ուշքով Պարգեււած եւ Տաղանդաւորների Կրթութեան (GATE) յայտագրի զատորոշիչ կէտերը:

Սկսեալ 1961 թիւը (GATE) յայտագիրը զբաղւել է ցուցաբերւած եւ ներքին կարողութիւնների խնդրով: Այս յայտագիրը առաջնորդել է երկիրը դէպի մասնաւոր ծրագրերի յղացում , յատուկ մտային եւ ստեղծագործական կարողութիւնները զարգացնելու նպատակով:

5.34 Ի՞նչեր են Պարգեււած եւ Տաղանդաւոր աշակերտների կրթութեան զատորոշիչ դասաւորումները:

ա. Մտային կարողութիւն
բ. Առանձնայատուկ ակադեմական կարողութիւն
գ. Բարձրագոյն իրագործման կարողութիւն
դ. Ստեղծագործական կարողութիւն
ե. Տեսողական եւ ներկայացման կարողութիւն
զ. Առաջնորդութեան կարողութիւն

5.35 Ի՞նչ փաստեր են նկատի առւում քնորոշելու համար որ մի աշակերտ պարգեււած եւ տաղանդաւոր է:

ա. Դպրոցական, դասարանային եւ աշակերտի անհատական արձանագրութիւնները (records)
բ. Գնարկութիւն դպրոցի վկայագրւած հոգեբանի կողմից, եւ գնահատութիւն մասնագէտների միջոցով (ծնողի գրաւոր թուլատւութիւնը պէտք է ստացւի նախքան քննութիւններ կատարելը:)
գ. Խմբական եւ անհատական քննութիւնները
դ. Հարցարաններ եւ աս ու լիս (ուսուցիչի, ծնողի, եւ ուրիշների միջոցով)
ե. Աշակերտական աշխատանքները
զ. Ընկերների դատողութիւնը

5.36 Ո՞ր դասարաններն են ծառայութիւններ ստանում Պարգեւածների եւ Տաղանդաւորների ծրագրից:

Պարգեւած եւ Տաղանդաւորների յայտագիր ունեցող կրթաշրջանները պէտք է աշխատեն ճանաչել տաղանդաւոր աշակերտներին եւ նրանց ծառայութիւններ տրամադրեն բոլոր դասարաններում:

5.37 Արդեօք բոլոր կրթաշրջանները պարտադիր են "GATE" յայտագիրը ունենալ:

Ոչ. Այս ծրագիրը պարտադրական չէ, թէեւ 443 կրթաշրջանները որ 1984 թւին այս յայտագիրը ունէին, ամբողջ հանրային դպրոցների աշակերտութեան 80 տոկոսից աւելին էին ընդգրկում:

5.38 Ի՞նչ է աշխատանքի թուլատուութիւնը:

Աշխատանքի թուլատուութիւնները վաւերագրեր են որ անչափահաս աշակերտները պէտք է ունենան վարձելու համար:

5.39 Ո՞վ է աշխատանքի թուլատուութիւն յանձնելու պատասխանատուն:

Կրթաշրջանի աշխատակազմն է անչափահասերին աշխատանքի թուլատուութիւն յանձնելու պատասխանատուն: Երբ դպրոցները բաց են, ոչ մի աշխատանքի թուլատուութիւն ունեցող անչափահաս եւ ոչ մի 18 տարեկանից պակաս անչափահաս աշակերտ չի կարող դպրոցից դուրս եւ առանց աշխատանքի քնել իրարու յաջորդող 10 օր կամ աւելի երկար ժամանակ: Բացառութիւն են կազմում այն պատանիները որ ութերորդ դասարանից յետոյ առնազն չորս տարի դպրոց յաճախելով աւարտել են միջնակարգ դպրոցը, կամ հաւասարաչափ ուսում ստացել անձնական մի դպրոցում, կամ նահանգի կողմից հմտութեան վկայական են ստացել:

Միայն տոյգ պայմանների տակ է որ 12-ից մինչեւ 18 տարեկան անչափահասները կարող են ստանալ աշխատանքի թուլատուութիւն:

5.40 Վաւերացած աշխատանքի թուլատուութիւնը ի՞նչ տեսակ տեղեկութիւններ է պարունակում:

Վաւերացած աշխատանքի թուլատուութիւնը պէտք է պարունակէ,-

- Անչափահասի անունը տարիքը, ծննդեան թիւը, հասցեն եւ հեռախօսի համարը
- Դպրոցի անունը, որ անչափահասը պարտադիր է յաճախելու կէս օրով, եւ դասերի ժամերը, կամ մի տեղեկագիր որը նրան ազատում է դպրոցից, նաեւ եթէ աշակերտի աշխատանքը դպրոցի ժամերից յետոյ է լինելու, նրա ամբողջ օրւայ պարտադրական դասերի ժամերը
- Ամենաշատ ժամերը որ աշակերտը կարող է աշխատել, երբ դպրոցները դեռ բաց են:
- Անչափահասի հանրային ապահովութեան (Social Security) թիւը
- Անչափահասի եւ թուլատուութիւն յանձնող անձի ստորագրութիւնը
- Թուլատուութեան ժամանակը վերջանալու թւականը

6.0 ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԷՋ

6.1 Ի՞նչու պէտք է ծեռնամուխ լինեմ զաւակիս կրթութեան խնդիրների մէջ:

Դուք, որպէս ծնող, մեծ դեր էք կատարում ձեր զաւակի կրթութեան մէջ: Դուք ձեր զաւակի առաջին եւ ամենակարեւոր ուսուցիչն էք: Ընդհանրապէս դուք ձեր զաւակին շատ աւելի լաւ էք ճանաչում քան թէ ուրիշ որեւէ մի անձ, եւ կարող էք ուսուցիչներին կարեւոր տեղեկութիւններ տալով, օգնէք նրանց որ աւելի լաւ հասկանան ձեր զաւակին: Երբ ուսուցիչներին առիթ էք տալիս ձեզ հետ հաղորդակցելու, ապացուցում էք որ ցանկութիւն ունէք նրանց հետ համագործակցել ձեր զաւակի ուսման համար: Այդ պարագայում նրանք գիտեն որ կարող են ձեր օգնութիւնը խնդրել, երբ դպրոցում կամ տան մէջ որեւէ դժւարութիւն է առաջանում եւ, որ դուք եւ ուսուցիչը կարող էք նեցուկ դառնալ իրար ձեր զաւակի շահերի համար:

6.2 Ի՞նչպէս եմ կարող տան մէջ զաւակիս կրթութեանը նեցուկ դառնալ:

Տարբեր միջոցներով կարող էք ձեր զաւակին օգնել որ նա յաջողի դպրոցում,–

- Վստահացէք որ ձեր զաւակը գիշերը ժամանակին եւ լաւ քնի, եւ սննդատու նախաճաշ ուտի ամէն օր:
- Օգնեցէք որ ձեր զաւակը դրական մտածելակերպ ունենայ դպրոցի եւ սովորելու հանդէպ, եւ քաջալերեցէք նրան մասնակցելու դպրոցի աշխատանքներին:
- Խրախուսեցէք որ նա շարունակաբար աշխատի իր դասերի վրայ, եւ յիշեցրէք նրան կրթութեան կարեւորութիւնը ապագայ կեանքում:
- Միշտ տեղեակ եղէք դպրոցում արւած դասերից եւ օգնեցէք տան մէջ պարապումներին:
- Յաճախ հաղորդակցէք ձեր զաւակի դպրոցի հետ: Հեռաձայնէք ուսուցիչներին եւ խորհրդատուներին, եթէ անձամբ չէք կարող հանդիպել նրանց:
- Կարդացէք դպրոցի ուղարկած տեղեկագրերը եւ լրագրերը, եւ պահանջւած պարագայում ստորագրեցէք եւ վերադարձրեցէք դպրոց:
- Փնտրելով գտէք թէ ի՞նչ առանձնայատուկ ծրագրեր կան դպրոցում կամ համայքում, ձեր զաւակի համար:
- Տեղեակ եղէք ընթացիք կրթական օրէնքներից եւ որ այդ օրէնքները ի՞նչպէս են ազդում ձեր զաւակին:
- Հովանաւորեցէք ձեր զաւակի ուսուցիչը եւ դպրոցը:
- Այնպէս դասաւորէք որ ձեր զաւակը դասերը սովորելու համար որոշւած եւ առանց ընդհատումի ժամ ունենայ տան մէջ:
- Օգնեցէք մանուկին իր տնային աշխատանքի մէջ եւ ստուգեցէք նրա աշխատանքը, վերջում:
- Ընթերցէք ձեր փոքրիկ զաւակների համար:
- Ձեր զաւակներին տարէք ձեր տեղական գրադարանը գրքեր ստանալու համար:
- Ձեր զաւակներին գիտական զբօսանքներ տարէք թանգարանները, կենդանաբանական այգում, գեղարւեստական ցուցադրութիւնները, շրջապատ թաղերը եւ այլն:
- Սահմանափակէք զաւակի առօրեայ հեռուստատես դիտելու ժամերը:

6.3 Որպէս ծնող, ի՞նչ ձեւերով եմ կարող մասնակցել իմ զաւակիս դպրոցի աշխատանքների մէջ:

Որպէս մի ծնող դուք տարբեր միջոցներով կարող էք ձեռնամուխ լինել դպրոցական զանազան աշխատանքներին: Դպրոցները միշտ փափաքում

են ծնողների մասնակցութիւնը ունենան դպրոցի ծնողական կազմակերպութիւնների , օրինակ՝ դպրոցի խորհրդակմբի , դպրոցի խորհրդատու յանձնախմբի , երկլեզուեան յանձնախմբի եւ ծնողա-ուսուցչական կազմակերպութեան մէջ:

Դպրոցում ձեզ կարելի է խնդրեն հետեւեալները,-

- Օգնել ձեր զաւակի դասարանում
- Աշխատել ծնողների սենեակում, որտեղ դասարանում գործածուելիք խաղեր, ձեռքի աշխատանքներ եւ դասաւանդական միջոցներ են պատրաստւում ուսուցիչների համար:
- Աշխատել դպրոցի գրադարանում կամ ճաշարանում:
- Հսկել երեխաներին գիտական զբօսանքների ժամանակ զբօսավայրում, գրադարանում, կենդանաբանական այգում եւ այլն:
- Հսկել դպրոցի խաղագետնում:
- Ձեր մշակութային սովորութիւնները, հմտութիւնները եւ զբաղմունքները ներկայացնել, օրինակ գեղեցիկ ասեղնագործներ, լուսանկարչութիւն, փայտի քանդակ եւ այլն:
- Ցուցափեղկերը զարդարել
- Ուրիշ ծնողներին հեռաձայնել
- Պատմութիւն կարդալ երեխաների համար
- Առանձին պարապել որեւէ աշակերտի հետ
- Օգնել աշակերտներին ձեռքի աշխատանքների մէջ
- Նիւթական նպատի յանձնախմբերին մասնակցել: Այս յանձնախմբերը աշխատում են դրամ ժողովել դպրոցի համար յաւելեալ պիտոյքներ գնելու համար:
- Ներկայ գտնւել ծնողի եւ ուսուցիչի հանդիպումներին եւ դպրոցի այցելութեան գիշերները:
- Ներկայ գտնւել դպրոցի խուրհուրդի ժողովին:

6.4 Որպէս ծնող ի՞նչ իրաւունքներ ունեմ ես:

Որպէս ծնող ձեր իրաւունքներն են,- [1]

- Որոշել թէ ձեր զաւակը հանրային, թեմական, կամ անձնական դպրոց պիտի յաճախի:
- Տեղեկութիւններ ստանալ թէ ի՞նչ է դասաւանդւում, ի՞նչ մեթոտներ են գործածւում, եւ իրագործման գնահատումը ի՞նչպէս է կատարւում ձեր զաւակի դպրոցում:
- Տնօրէնին կամ դասատուին նախապէս տեղեկացնելով, այցելել ձեր զաւակի դասարանը: Դիմեցէք կրթաշրջանին այցելութեան վերաբերեալ ստոյգ տեղեկութիւն ստանալու համար:
- Պահանջել տնօրէնի եւ ուսուցիչի հետ հանդիպում ունենալ:
- Տեսնել դասարանում գործածւող դասաւանդական առարկաները, եւ վերաքննել ուրեւէ պիտոյքներ որ գնւել են դաշնակցային դրամով յատուկ յայտագրերի համար:
- Տեղեկանալ թէ ի՞նչ են նւազագոյն հմտութիւններն եւ կարողութիւնները որ ձեր զաւակը պէտք է լրացնի:

---

[1] Այստեղում ցուցակագրւած խնդիրները (բացի վերջին առարկան) վերցւել են Bruce Baron եւ միւս անձերի What Did You Learn in School Today? N.Y.: Warner Books. հրատարակութիւնից: Բովանդակութիւնը գործածւել է թուլատրութեամբ:

- Ձեր կարծիքը յայտնել ձեր զաւակի դասարանում տրւած դասերի վերաբերեալ: Վերջին որոշումը ձեզ չի տրւում իհարկէ, եւ պէտք է դպրոցի եւ/կամ դպրոցի խորհուրդի հետ աշխատակցէք ձեր տեսակէտերը նրանց յայտնելու համար:
- Ակնկալութիւն ունենալ որ ձեր զաւակը մարմնապէս եւ հոգեպէս ապահով պայմաններում լինի դպրոցում:
- Ակնկալութիւն ունենալ բաւարար հսկողութիւն լինի ձեր զաւակի վրայ դպրոցի ժամերին:
- Նախապէս տեղեկացւելու դպրոցի օրէնքների, ներկայութեան կանոնների, հագնւելու օրէնքների, եւ դպրոցը այցելելու ձեւերի մասին:
- Վերաքննութիւն պահանջել դպրոցի որեւէ որոշումի մասին որ տրւել է ձեր զաւակին դպրոցից ժամանակաւոր հեռացնելու կամ վտարելու նպատակով:
- Տեղեկութիւն ստանալ ձեր զաւակին տրւած քննութիւնների եւ քննութեան նպատակի մասին:
- Տեղեկութիւն ստանալ որեւէ հոգեբանական քննութեան մասին որ տրւում է ձեր զաւակին դպրոցում: Ձեր արտօնութիւնը պէտք է ստացւի քննութիւնից առաջ:
- Տեղեկութիւն ստանալ քննութեան նիշերի, նրանց իմաստների եւ գործածութեան վերաբերեալ:
- Անդամակցել ծնողական խորհուրդին կամ յանձնախմբին: Այս խմբերի գոյութիւնը կարելի է օրէնքի կողմից թելադրւած լինի, կամ կարելի է կամաւորապէս կազմւեն:
- Մասնակցել դպրոցի խորհրդի ժողովներին, տեղեկանալու համար թէ ի՞նչ է անցնում կրթաշրջանում:
- Նարծիքներ յայտնել, երբ դպրոցի գործելակերպերը որոշւում կամ փոխւում են, օրինակ՝ դպրոցի տագուստների ձեւի օրէնքը, կամ միջնակարգի պահանջները:
- Քննել դպրոցի արժանագրութիւնները ձեր զաւակի մասին:
- Հարց տալ արժանագրութիւնների մէջ նշւած որեւէ տեղեկութեան մասին, որ կարծում էք ճշմարիտ չէ, սխալ ուղղութիւն է տալիս, կամ ձեր առանձնութիւնը խախտում է, եւ գոհացուցիչ պատասխան պահանջել դպրոցից:
- Ձեր անկարող (handicapped) զաւակին տեղաւորել մի յարմարացւած հանրային դպրոցական ծրագրում: Ծնողները նոյնպէս պէտք է գրաւոր արտօնութիւն տան իրենց անկարող զաւակի տեղաւորումի համար

7.0 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1 Ի՞նչպէս է հանրային դպրոցի կազմակերպութիւնը:

Քալիֆորնիայի դպրոցները կազմուած են տարրական կրթաշրջաններից, (սովորաբար մանկապարտէզից մինչեւ վեց կամ ութերորդ դասարան) , եւ միաւորուած կրթաշրջաններից (մանկապարտէզից մինչեւ տասերկուերորդ) եւ միջնակարգ կրթաշրջաններից (իններորդից մինչեւ տասերկուերորդ) :

7.2 Ի՞նչ գլխաւոր գործակալութիւններ ազդեցութիւն ունեն հանրային դպրոցների վրայ:

Գլխաւոր գործակալութիւնները որ ազդեցութիւն ունեն դպրոցների վրայ բաղկանում են կրթաշրջաններից, կոմսութեան կրթական գրասենեակից, նահանգային հիմնարկութիւններից, եւ դաշնակցային կազմակերպութիւններից: Այս բոլոր գործակալութիւնները բաժին ունեն ձեր զաւակին լաւագոյն կրթութիւն տալու մէջ:

7.3 Ո՞վ է ղեկավարում ձեր կրթաշրջանի դպրոցները:

Կրթաշրջանները ղեկավարում են տեղական Ուսումնական Խորհուրդի միջոցով: Ուսումնական Խորհուրդը պատասխանատու է հիմնելու եւ գործադրելու իր ղեկավարութեան տակ գտնուող դպրոցները:

7.4 Ի՞նչպէս է տարրական դպրոցի կազմակերպութիւնը:

Տարրական դպրոցում տնօրէնը օրւայ ծրագրի պատասխանատուն է, եւ իւրաքանչիւր դասատու մէկ դասարանի ծրագրի պատասխանատուութիւնն է ստանձնում: Երբ դպրոցի սահմանած-անգլերէնի կարողութիւնով աշակերտների թիւը (որոնք նոյն մայրենի լեզուով են խօսում)քաւական է լինում, երկլեզու դասատուներ պէտք են դպրոցում: Նեւ դպրոցի աշխատակազմը բաղկանում է հետեւեալ անձերից: Մասնագէտներ կարդալու, թւաբանութեան, անգլերէնը որպէս երկրորդ լեզւի համար, որոնց պարտականութիւնը ուղղող մասնագէտներ, մէկ հոգի հիւանդապահուհի, օգնական ուսուցիչներ, մէկ հոգի համայնքի հարակից անդամ, մէկ հոգի երկլեզուեան յայտագրի համակարգիչ եւ ուղղեցոյց ուսուցիչներ:

7.5 Ի՞նչպէս է երկրորդական դպրոցի կազմակերպութիւնը:

Երկրորդական դպրոցում տնօրէնը ամբողջ դպրոցի պատասխանատուն է եւ ընդհանրապէս օժանդակութիւն է ստանում օգնական տնօրէններից, որոնք ամէն մէկը պատասխանատու են դպրոցի մի գործունէութեան : Մեծ երկրորդական վարժարանները ունեն նախագահներ ամէն մէկ կրթական բաժանմունքի համար (անգլերէն, թւաբանութիւն, գիտութիւն, մարմնամարզութիւն եւ այլն) : Յատուկ յայտագրերը , ինչպէս երկլեզուեան կրթութիւնը, օրէնքի համեմատ ունեն մի ղեկավար կամ համակարգիչ:

7.6 Կրթաշրջանները նիւթապէս ի՞նչպէս են կառավարւում:

Հանրային դպրոցների նիւթական յատկացումների մէկ մասը հայթայթւում է տեղական կալւածների տուրքերից, թէեւ յատկացումների մեծ մասը ստացւում է նահանգային տուրքերից: Քալիֆորնիայի օրէնադրական մարմինը որոշում է հանրային դպրոցներին յատկացւելիք գումարը: Յաւելեալ գումարներ է տրւում այն կրթաշրջաններին որ ունեն յատուկ կարիքներով աշակերտութիւն: Դաշնակցային յատկացումների մեծամասնութիւնը գործածւում է յատուկ կարիքներ ունեցող աշակերտներին օգնելու համար, օրինակ՝ քիչ եկամուտով ընտանիքների զաւակները, երկլեզուեան կրթութեան կարիք ունեցող աշակերտները, արհեստաւորական կրթութեան մէջ արժանագրւած աշակերտները, եւ անկարող աշակերտները:

7.7 Ինչու պետք է ծնողները ըմբռնեն հանրային դպրոցների կազմակերպությունը:

Ցեղեակ ծնողները կարող են իրենց զաւակներին օգնել, որ նրանք միշտ որոշումներ ան իրենց կարիքների մասին: Ծնողները պետք է հավատան Քալիֆորնիայի հանրային դպրոցների կազմակերպությունը որպէսզի կարողանան գերազանցեցնել կրթական առիթները իրենց զաւակների համար:

A Handbook on California Education for Language Minority Parents (English Version)

Prepared under the direction of the
Bilingual Education Office
California State Department of Education

Publishing Information

This document was compiled by the Bilingual Education Office, was edited and prepared for photo-offset production by the Bureau of Publications, and was published by the California State Department of Education, 721 Capitol Mall, Sacramento, California (mailing address: P.O. Box 944272, Sacramento, CA 94244-2720). It was printed by the Office of State Printing and distributed under the provisions of the Library Distribution Act and *Government Code* Section 11096.

© Copyright 1986
California State Department of Education

Copies of this publication are available for $3.25 each, plus sales tax for California residents, from Publications Sales, California State Department of Education, P.O. Box 271, Sacramento, CA 95802-0271.

A partial list of other publications available from the Department may be found at the back of this publication. A complete list of publications available from the Department can be obtained by writing to Publications Sales at the address listed above.

Contents

	Page
Acknowledgments	E-vi
Foreword	E-vii
Preface	E-viii
Introduction	E-1
1.0 Enrollment and Attendance; General Information; Transportation	E-2
1.1 When should my child enroll in school?	E-2
1.2 Will my child be able to attend a neighborhood school?	E-2
1.3 How is my child's grade level determined?	E-2
1.4 Do American schools accept course credits earned in foreign countries?	E-2
1.5 How is the noon meal provided for students?	E-2
1.6 How much will I have to pay for my child's schooling?	E-2
1.7 What do I do when my child is absent from school?	E-2
1.8 Will my child ride a school bus from home to school and back?	E-2
1.9 What happens if my child misses the bus?	E-2
1.10 If my child qualifies for special education and cannot ride the regular school bus, what can be done?	E-2
1.11 What can I do to protect my child while he or she is riding on the school bus?	E-2
1.12 May school districts charge a fee for transportation on a school bus between home and school?	E-3
2.0 Basic School Program; Curriculum	E-3
2.1 What is a minimum day?	E-3
2.2 What subjects are taught in elementary grades (K—6)?	E-3
2.3 What subjects are taught at the high school level?	E-3
2.4 What high school requirements will my children have to meet?	E-3
2.5 What is independent study?	E-3
2.6 What other programs may operate in my child's school?	E-3
3.0 Grades; Promotions; Testing	E-4
3.1 What does an elementary student's report card include?	E-4
3.2 What does a high school student's report card include?	E-4
3.3 What do the report card symbols mean?	E-4
3.4 What is a citizenship grade?	E-4
3.5 What is a work habit grade?	E-4
3.6 What should I do when I receive my child's report card?	E-4
3.7 How often are report cards issued?	E-4
3.8 What are the requirements for promotion to the next grade?	E-4
3.9 What procedures are involved in grade retention?	E-4
3.10 What does the pupil proficiency law require?	E-4
3.11 What effect does the pupil proficiency law have on your child's graduating from high school?	E-4
3.12 What is the high school proficiency test?	E-5
3.13 Who must take the proficiency test?	E-5
3.14 How many opportunities will a student have to take the proficiency test?	E-5
3.15 May a student with limited-English proficiency take the proficiency test in a language other than English?	E-5
3.16 Must schools provide special services for limited-English-proficient (LEP) students to help them pass the proficiency test?	E-5

3.17 Will the parents be notified if a student fails the proficiency test? E-5
3.18 If a student completes all required courses but fails the proficiency test, what can be done? E-5
3.19 If my child does not complete the required courses or does not pass the proficiency test, are there other ways to obtain a high school diploma or equivalent? E-5
3.20 What is the California Assessment Program (CAP)? E-5
3.21 What information does CAP provide for each school? E-5
3.22 Where can you find CAP reports? E-5
3.23 When do the latest test results become available? E-5
3.24 May my child enter a community college without a high school diploma? ... E-6
3.25 What admission requirements does The California State University have? .. E-6
3.26 What admission requirements does the University of California have? E-6
3.27 What financial aid is available for my child's college education? E-6

4.0 Bilingual Education E-6

4.1 What is the *Home Language Survey?* E-6
4.2 How does the school determine each child's language proficiency? E-6
4.3 What is bilingual education? E-6
4.4 What should be the qualifications of staff members in a bilingual program? E-7
4.5 When is a bilingual program provided at the elementary level? E-7
4.6 What types of bilingual programs are available? E-7
4.7 What happens when an elementary school has fewer than ten LEP students? E-7
4.8 When is a bilingual program provided at the secondary level? E-7
4.9 How long does an LEP student have to stay in the bilingual program? E-7
4.10 Must parents be notified before a child may be enrolled in a bilingual program? E-8
4.11 What if parents wish to withdraw their child from a bilingual program? E-8
4.12 May parents request the withdrawal of their child from an individual learning program? E-8
4.13 What is a bilingual advisory committee? E-8
4.14 What are the responsibilities of the bilingual advisory committee? E-8

5.0 Additional Education Programs and Services E-8

5.1 What is advanced placement? E-8
5.2 What is alternative education? E-8
5.3 What is continuation education? E-8
5.4 Who may need continuation education? E-9
5.5 What is vocational education? E-9
5.6 What is the intent of vocational education? E-9
5.7 Who is eligible to receive vocational education? E-9
5.8 What is work experience education? E-9
5.9 What is adult education? E-9
5.10 Who pays for adult education? E-9
5.11 Who is eligible to enroll in adult education programs? E-9
5.12 What is opportunity education? E-9
5.13 Who provides opportunity education? E-9
5.14 Is there a child development program available for my child in the state educational system? E-9
5.15 Am I eligible for a state-subsidized child development program for my child? E-9
5.16 How many types of the state-subsidized child development programs are there? E-10
5.17 Where can I go to enroll my child in a child development program? E-10

5.18 What can my child learn in a child development program? E-10
5.19 What are some of the benefits my child and I will get from a child development program? E-10
5.20 What are the expenses for a child development program? E-10
5.21 What are year-round schools? E-10
5.22 What are year-round calendars? E-10
5.23 Are programs in year-round schools the same as those in regular schools? .. E-10
5.24 Why are not all schools year-round schools? E-10
5.25 Are year-round schools required? E-10
5.26 Do all year-round students attend class at the same time? E-10
5.27 Do year-round schools offer summer sessions? E-10
5.28 Where can I get more information on year-round schools? E-10
5.29 Will my children enjoy year-round education? E-11
5.30 What is summer school? E-11
5.31 How can summer school attendance help students? E-11
5.32 How do I know if a child is gifted or talented? E-11
5.33 What are the distinguishing features of the California Gifted and Talented Education (GATE) Program? E-11
5.34 What are the GATE identification categories? E-11
5.35 What kind of evidence is used to identify that a child is gifted and talented? E-11
5.36 What grade levels are served in GATE programs? E-11
5.37 Are school districts required to have GATE programs? E-11
5.38 What are work permits? E-11
5.39 Who is responsible for issuing work permits? E-11
5.40 What information does a valid work permit contain? E-12

6.0 Parental Involvement in the Schools E-12

6.1 Why should I become involved in my child's schooling? E-12
6.2 How can I support my child's education at home? E-12
6.3 What are some of the ways in which I can participate in my child's school? E-12
6.4 What rights do I have as a parent? E-13

7.0 Structure of the Public School System E-13

